№ 84 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 22

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում դրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 84 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 22

Չորեքշաբթի, ապրիլի 25-ին
ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
տեղի կունենայ
ԳԱՐՆԱՆ ՋԲՕՍԱՆՔ
նորակազմ հայ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ընկերութեան օգտին
բազմակողմանի ծրագրով
Մուտքը 30 կոպէկ, մանուկները 20 կոպէկ

Երկուշաբթի, ապրիլի 23-ին,
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
այգում, լիներու է
առաջին անգամ գարնանային
ՋԲՕՍԱՆՔ
ԳԱՐՆԱՆ ՏՕՆԸ
Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան օգտին
I ԾԱՂԻԿՆԵՐԻ ԹԱԳՈՒՀՈՒ
հանդիսաւոր գնացք կը սկսվի երեկ. ժամը 6-ին. ամեն մի երեխայ ստանալու է ծաղիկների մի փնջաւոր (гирляндъ/ծաղիկների թափօրին մասնակցելու համար. ծաղիկների բաղունուն ուղեկցելու են լապտերներով և ծաղկեայ գրոշներով։
Պարերը ժամը 7-ից մինչև 9-ը պ. Լ. Պ. ՕՎԵՐԼՈՅԻ ղեկավարութեամբ։
II ՎԻՃԱԿԱԽԱՂ
1000 իրերով, որոնց թւում լինելու է ՊԵՏԱԿԱՆ ՄԻ ՌՈՆՏԱ, սերվիզ, մի զորգ, ժամացոյց և այլն։
III ԿԱՐԹՈՒՐՍ (удочка)
ձուախաղ, ձիախաղ Ռեբուս մրցանակով, լոտո 20, 40 և 60 բուբլի պրեմիայով
Եւրոպական և ասիական երաժշտութիւն, գեղեցիկ կիոսկներ և լամպիոններ։
մուտքը մեծերից 25 կ. փոքրերից 15 կ.
Սկիզբն է ժամը 4-ին
առ. 1—1

ԵԴԵՏԸ ԱԼԲԵՐՏԸ ԼՈՐԻՑԸ

и на дняхъ будетъ демонстрировать поразительные опыты, съ которыхъ большинство изъ публики только читало и слышало, но не имѣло случая видѣть

Г. Лорицъ производитъ слѣдующіе опыты: беретъ обыкновенную веревку за одинъ конецъ, къ другому прикрѣпляетъ камень, бросаетъ его вверхъ—камень остается съ веревкой вертикально висящимъ въ воздухѣ, тогда г. Лорицъ влѣзаетъ по этой веревкѣ вверхъ и спускается внизъ, камень съ веревкой все время остается висящимъ въ воздухѣ.

Г. Лорицъ наполняетъ театръ или клубъ водой; публика, сидящая въ театрѣ видитъ ясно, какъ со всѣхъ сторонъ врывается вода и сверху идетъ дождь; затѣмъ чувствуетъ, что до пояса сидитъ въ водѣ и проч., затѣмъ моментально вся вода исчезаетъ. Во время исполненія этого опыта происходитъ въ публикѣ масса курьезовъ.

Опыты моментальнаго произрастанія сѣмянъ: Г. Лорицъ въ присутствіи публики сѣетъ какія либо сѣмена, цвѣты, травы, деревья, хлѣбъ и проч.; и въ пять минутъ посѣянное вырастаетъ въ одинъ аршинъ и болѣе.

Опыты животнаго магнетизма и воздѣйствія его на цвѣты, деревья и прочую растительную фауну. Благодаря воздѣйствію музыки, извлекаемыхъ звуковъ изъ флейты или скрипки, бутоны цвѣтка постепенно вырастются и въ продолженіи пяти минутъ пышно цвѣтутъ, а лиственная почка дерева или цвѣтовъ постепенно раскрывается и расправляетъ листья, при этомъ происходитъ усиленная циркуляція растительной лимфы въ стволѣ и стеблѣ, по прекращеніи же звуковъ музыки, все вновь начинаетъ увядать, смыкаться въ почку, бутонъ и возвращается въ первобытное свое состояніе.

На глазахъ у публики наполняетъ пустое ведро горячей водой, ставитъ его на столъ и моментально въ присутствіи всѣхъ вода замерзаетъ до самого дна, а потомъ этотъ ледъ рубится и показывается всѣмъ посѣтителямъ.

Г. Лорицъ имѣетъ самый обыкновенный столъ, который ставитъ посреди сцены, затѣмъ влѣзаетъ на столъ двумя лицами и столъ, къ общему удивленію всѣхъ, подымается высоко на воздухъ и постепенно опускается внизъ.

Самымъ настоящимъ образомъ зашиваетъ лицамъ, подверженнымъ опыту, и желающимъ изъ публики РОТЪ иглой съ ниткой, вынимаетъ глаза изъ орбитъ и вставляетъ обратно, прибиваетъ толстыми гвоздями ки доскѣ руки, ноги, рѣжетъ и колетъ тѣло безъ вреда, боли и потери крови.

Г. Лорицъ производитъ также опыты и надъ животными, моментально порабощая ихъ волю и сознаніе на нѣсколько минутъ, приводя животныхъ, какъ положительно безсознательное состояніе, такъ и въ состояніе веселаго настроенія, заставляя животныхъ бѣгать, прыгать, выть, кусать и выражать другія различныя эмоціи и движенія. Читаетъ запечатанныя письма и книги на всѣхъ европейскихъ и азіатскихъ языкахъ, угадываетъ—сколько у кого денегъ, цѣнныхъ бумагъ, и который часъ у каждаго изъ публики.

Вызываетъ тѣни
УМЕРШИХЪ И ЖИВЫХЪ
изъ отдаленныхъ странъ

При появленіи призрака каждый можетъ видѣть ясно тѣнь умершаго и живого и убѣдиться въ томъ, что явившійся призракъ дѣйствительно тотъ самый, который желали видѣть и проч.

Необыкновенный опытъ бывшій гвоздемъ на Олимпійскихъ играхъ въ Афинахъ: Г. Лорицъ беретъ обыкновенное куриное яйцо и на глазахъ у публики разбиваетъ его немного и изъ отверстія его вытягиваетъ цыпленокъ, который на рукѣ у г. Лорица въ пять минутъ постепенно вырастаетъ въ большого пѣтуха и затѣмъ опять постепенно уменьшается до величины яйца, въ которое вкладывается обратно, и яйцо окажется цѣлымъ. Въ заключеніе г. Лорицъ окрашиваетъ театръ или клубъ въ разные цвѣта красокъ. Всѣ опыты производили фуроръ на Олимпійскихъ играхъ въ Афинахъ, въ Греціи въ 1906 году.

Не логично отрицать факты
ТОЛЬКО ПОТОМУ
что они к жутся невозможными

О днѣ сеанса и подробная его программа будетъ объявлено особо

Ассистентъ Л. Неметти.

Концертный залъ музыкальнаго училища
ИМПЕРАТ. МУЗЫКАЛЬНАГО ОБЩЕСТ.
Въ среду 25 апрѣля 1907 г.
АЛЬБЕРТЪ ЛОРИЦЪ

дастъ единственный въ своемъ родѣ сеансъ, о которомъ большинство изъ публики только читало и слышало, но не имѣло случая видѣть. Сеансъ этотъ представитъ для публики глубокій интересъ, въ антропологическомъ отношеніи касаясь АНАТОМІИ и ХИРУРГІИ, ПСИХОЛОГІИ и ТЕЛЕПАТІИ.

Г. Лорицъ будетъ вызывать у субъектовъ и животныхъ подверженныхъ этимъ опытамъ Анестезію (болевую нечувствительность тѣла) и Гиперестезію (обостренную болевую чувствительность отдѣльныхъ частей тѣла). Каталепсію т. е. статуническое состояніе въ различныхъ формахъ и видахъ. Извращеніе вкусовыхъ ощущеній. Будетъ угадываніе мыслей публики и производить курьезное зашиваніе РТА иглой съ ниткой самымъ настоящимъ образомъ въ присутствіи всѣхъ. Будетъ прибивать гвоздями руки къ доскѣ безъ боли и вреда и другіе эксперименты внушенія благодаря чему можно вызвать у нѣкоторыхъ лицъ какое угодно состояніе, ощущеніе и воображеніе, несуществующіе въ дѣйствительности, зрительные, слуховые, вкусовые, осязательные и. т. п. ощущенія и различныя галлюцинаціи, неотразимыя идеи и побужденія до того реальныя, что ни одинъ изъ зрителей не усумнится въ дѣйствительности того, что видитъ, или испытываетъ.

Подробности объявлены въ особ. афиш. Начало ровно въ 8½ ч. веч.

Продажа билетовъ заблаговр. съ 23 апрѣля въ помѣщеніи музыкальнаго училища
Сеансъ имѣетъ быть только одинъ.

առ. 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործ և յոյս. Վերջին տեղեկութիւններ. Օգնութեան գործը. Կանանց գործունէութեան մի քանի մասեակ. Տնայնագործական ընկերութեան օգտին. Ի՞նչ են ուզում. Մամուլ. Դէս ու դէն. Ժողովրդական հավաքարանում. Պետական Խորհուրդ. Կառավարչական շրջաններում. Մենաշնորհ լուրեր. Թատրոն և երաժշտութիւն. Զանակական նուէրներ. Նամակներ խմբագրութեան. ՀԵՌԱԳԻՐԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ—Բալա Սանամը։

ԳՈՐԾ ԵՒ ՅՈՅՍ

I

Կենդանի ժողովուրդը, կուլտուրական ժողովուրդը չը պէտք է յուսահավել և իրաւունք չունի յուսահավելու։

Նա նոյն իսկ ամենածանր և դժնդակ օրերում պէտք է չը կորցնէ իր գլուխը և միջոցներ որոնէ իր փրկութեան ճանապարհի վրա անսասան կանգնելու։

Բայց մի ժողովուրդ իրաւունք ունի չը վհատվելու և չը լքվելու միայն այն ժամանակ, երբ նա դատարկ յոյսերով ու օրօրներով չէ բաւականում. այլ առաջ է գալիս իբրև գիտակից մի հասարակութիւն, իբրև կենսունակ մի օրգանական այժ, իբրև մաքառող ու վերստեղծող մի գործօն։

Մի յուսահավիր, մի լքվիր, մի վհատվիր։ Բայց միևնոյն ժամանակ գործիր, գործիր քո հոգու բոլոր զօրութեամբ, քո հառնդի անմկուն այժով։

Այն ժամանակ կազատվես։

Մեր իրականութիւնը ցոյց է տալիս, որ շատ տեղերում սկսել է պակասել արիութիւնը մարդկանց մէջ և նրանք սկսել են անձնատուր լինել անտարբերութեան և ընկնել մռայլ արամադրութեան մէջ։

Այդ երեւոյթը իր արմատի մէջ չքացնելու համար պէտք է զինվեն մեր բոլոր կուլտուրական գործօնները, լաւ գիտենալով, որ ժողովրդական կեանքի ամեն մի խոշոր դադար, ամեն մի մասայական քայքայումն, դուռ են բացում լայնատարած սարսափելի աղէտների համար։

Մաքառիր թշուառութեան, լքման դէմ, գործիր ժողովրդական այժերի վերակազմուրման համար և դու կատարել իրաւունք ունես չը վհատվելու։

II

Ծանր օրերում է մեր ժողովուրդը հանդիպում իր Զատիկը։

Հազարաւոր ընտանիքներ կարիքի ու զրկանքների մէջ են։

Սովը, հիւանդութիւնները, մանուկական քայքայումները տակն ու վրա են արել ժողովրդական կեանքը։

Եւ ազգաբնակութեան առաջ դրված է գոյութեան կոիւը իր ամենատարրական բնաւորութեամբ, այն է ապահովել հաց իր համար, պահպանել իր ֆիզիքական գոյութիւնը։

Այդ դրութեան մէջ ժողովրդի աչքին այլևս չեն գալիս աւելի բարդ պահանջներ, մասաւոր և բարոյական շահեր, կուլտուրական ծրագիրներ։

Դժբաղդութեան արամադրութիւնն է դա։

Եւ այն՝ ինչ բոլշեներում։

Այնպիսի նշանակալից պատմական բոլշեներում, երբ ժողովուրդը պէտք է ընդունակ լինէր ցոյց տալու մասաւոր և բարոյական գործունէութեան հերոսութիւններ, երբ մի քանի ամսվայ և մի քանի տարվայ մէջ նա պէտք է հանդէս բերէր այնքան եռանդ և կուլտուրական կորով, որքան ուրիշ պատմական շրջաններում տեղի են ունենում տասնապատիկ աւելի երկար ժամանակամիջոցներում։

Այո, մենք ապրում ենք պատմական շատ խոշոր մի շրջանում, որից սակայն չենք կարողանում օգտվել մեր կուլտուրական զարգացման համար։

Եւ դա սոսկալի է։

III

Այո, սոսկալի է։ Բայց եթէ մենք կարող լինենք ամբողջ ժողովրդով, հանրային այժերով օգնել միմեանց՝ կուլտուրական հասած աղէտների դէմ, մենք զգալի կերպով կը թուլացնենք թշուառութեան հարուածների այժը և կը նուաճենք հասատ դիրքեր մեր մասսայի զարգացման համար։

Ահա սովը և հիւանդութիւնները։ Մենք կռուում ենք նրանց դէմ։ Դա վրկութեան ճանապարհներից մէկն է։ Բայց թոյլ ենք կռուում։ Եւ անշուշտ մենք աւելի լաւ կարող կը լինէինք կռուել, եթէ աւելի սերտ կերպով կպչէինք գործին և մասնայինք ժողովրդին։

Նոյնը և կուլտուրական գործունէութիւնների վերաբերութեամբ։

Մենք պէտք է կազմակերպվենք՝ տալու ժողովրդին դպրոց, գիրք, արհեստ, շտեմարաններ, ժողովրդական դրամարկղներ և մի շարք ուրիշ հաստատութիւններ։

Շտապենք գործելու, որովհետև իրականութեան մէջ մենք տեսնում ենք, որ եղած դպրոցներն էլ փակվում են, մի քանի կուլտուրական հաստատութիւններն էլ ոչնչացվում են։

Անհրաժեշտ է եռանդուն գործունէութիւն թէ եղածը պահպանելու և թէ նոր կուլտուրական գործեր սկսելու համար։

Ինտելիգենտ այժերի եռանդուն և անձնուէր գործունէութիւնը կը ներշնչէ ոգևորութիւն, որից կենդանութիւն կը ստանայ ժողովրդական մասսաների կուլտուրական կեանքը։

IV

Գարուն է մեր շուրջը։

Նա եկել է վերակենդանացնելու բընութիւնը, կեանք տալու գիւղական արտերին, ուտելու պաշարներ ընձեռելու մարդկանց և նրանց անասուններին։

Եւ եթէ տարին դժբաղդ չի լինի, երկիրը նորից կը հաւաքի պաշարներ իր համար։ Եթէ արտերը առատ ցանված կը լինեն, հողագործ ժողովուրդը նորից ոտքի կը կանգնէ։

Նոյնն էլ մասւոր ու բարոյական կեանքում։

Եւ արդարև, եթէ մենք նախաձեռնող կը հանդիսանանք մի շարք կուլտուրական գործառնութիւնների համար, կաշկանդենք ժողովրդին մեր աշխատանքով, մեր խորհուրդներով, մեր հրահանգներով, մեր ժողված գումարներով, այն ժամանակ այդտեղ էլ մի գարուն կը ստեղծենք։ մի բարոյական ուժեղ զըրգում կառաջցնենք բեղմնաւոր գործունէութեան համար։

Պատմական ներկայ դէպքում, անցողական ներկայ շրջանում մեր ինտելիգենտ դասի, մեր գործողների շարքերի առաջ դրված է ժողովրդին բազմակողմանի կերպով աշակցելու խնդիրը։

Դա չափազանց կարևոր և էական խնդիր է։

Գործենք և գործի եռուն կոհակների մէջ ներշնչենք յոյս դէպի ապագան։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թիֆլիսի Նպաստամատոյց Ցանձնաժողովը ստացել է հետևեալ հեռագիրը Զանգեզուրի գաւառի կարօտեալների թուի մասին։

Գորիս, ապրիլի 18-ին

Վիճակագրված քաղցածների թիւը իմ շրջանում հետևեալն է.

Զանգեզուրում	9330
Սիսիանում	5200
Լափանում	9500

Իւրաքանչիւր կարօտեալի համար պէտք է հաշուել ամսական մի պուդ հաց մինչև յուլիսի սկիզբը։

Իւղաշեան

—

Պետերբուրգ ապրիլի 18-ին

Պետական Դումայում տեղի ունեցած Զոհրաբեանի դէպքի առիթով յայտնի տեսակի լրագրերները, մասնաւոր «Новое Время» թերթը, զրգռում են ժողովրդին եւ զօրքը հայերի դէմ։

Գարբ

—

Մեզ հաղորդում են, որ Կախեթիայի սահմանի վրա, Սարթաճալայի ոստիկանական մասում 6 հոգուց բաղկացած աւազակների մի խումբ է երևացել։ Ապրիլի 6-ին, յիշեալ աւազակախումբը օգուտ քաղելով կառավարչի բացակայութիւնից, օրը ցերեկով ժամի 11-ին կողոպտել է Մանավա հայ-վրացական գիւղից մէկ ու էկս վերստ հեռաւորութեան վրա գտնվող Փրիզոնեանի կալուածը. շրջապատները շներին թունաւորել են, ապա կոտրելով բնակարանի դռները, ներս են մտել ու փշուր փշուր արել կահ կարասիները։ Տարել են մի քանի իրեղէններ, որոնց թւում և երկու հրացան։

Սմսի 8-ից 10-ը յիշեալ աւազակները կողոպտել են մի քանի հոգու նոյնպէս և արդէն իրանց դէմ են դրդռել տեղական ազգաբնակութեանը։

Պրիստաւ իշ. Դեղեվանովը հետաքրքրում է լինում աւազակներին։ Ինչպէս լսում ենք խիստ միջոցներ են ձեռք առնված աւազակներին ոչնչացնելու համար։

—

Թեհրան, 18 ապրիլի։ Էմին-Սուլթանին շնորհված է պարսկական բարձր Ամիր աթաբէգ տիտղոսը։ Նա գտնվում է Շահի մօտ, քաղաքից դուրս կառուցված պալատում։

Խոշոր հողատէրերի սպէկուլացիայի (շահագրգռութիւն) պատճառով, հացի գինը անհաւատալի չափով բարձրացաւ։ Մէշլիսը հինգ օր ժամանակ տուեց, որից յետոյ կը ձեռնարկէ ստիպողական գրաւման։

Պարլամենտը համարեա միաձայն որոշեց պահանջել, որ նեռքին գործերի մինիստրը հրաժարական տայ։ Եթէ մօտակայ նիստում արտաքին գործերի մինիստրը չը տայ այն բացատրութիւնները, որ պահանջել է պարլամենտը մի քանի շաբաթ առաջ, որոշված է պահանջել և նրա հրաժարականը։

(«Հ. Գ.»)

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

I

Շամշադինի վիճակից մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ներկայումս եռանդուն կերպով շարունակվում է արտերի ցանքը։ Բայց շատ կան տներ, որոնք միջոց չունեն մեծ տարածութիւն սերմանել, և բաւականանում են եղածով։

Նպաստամատոյց Ցանձնաժողովի ուղարկած 3000 բուբլի գումարը բաժանվել է 11 գիւղի վրա։ Բաժանման ժամանակ հաշի են առնված գիւղացիների միայն ամենակարօտ ընտանիքները։ Մի քանի գիւղերում նաև միջին համարվող ընտանիքներն էլ լինելով չափազանց եղ վիճակի մէջ, ստացել են նպաստներ, օրինակ Թօվուզ, Մովսէս և Զիլարլի գիւղերում։

Գիւղական տոնը ստացել է 3-ից մինչև 15 բուբլի։

Նպաստները բաժանվել են այսպէս։

Թօվուզ գիւղին	. . .	527 բուբլի
Ղուլալի »	. . .	418 »
Մովսէս »	. . .	402 »
Վերին Կ. Աղբիւր »	. . .	330 »
Հախում »	. . .	259 »
Զիլարլի »	. . .	239 »
Նորաշէն »	. . .	237 »
Կրզէն »	. . .	220 »
Նաուր »	. . .	196 »
Զօրաթան »	. . .	124 »
Քեօսալար »	. . .	106 »

Ընդհանուր գումարը փոքր ինչ աւելացել է նշանակած գումարից, որովհետև կարիքը չափազանց մեծ է եղել։

II

Այդ գումարները տրված են սերմացուի համար։ Եւ գիւղացիները արդարև գնում են սերմացու՝ ցանելու համար, օրինակ գարի, կորեկ, գեանախնձոր։

Բայց նկատվել է և այն, որ գիւղացիների չքաւոր դասը գործադրել է իր ստացած գումարների մի մասը ուտելու հացի վրա, որովհետև բոլորովին դուրկ է ուտելու պաշարներից։

Գիւղացիների մէջ, նոյն իսկ ամենակարօտների շրջանում, նկատվում է, որ ով հնար է ունեցել՝ ձեռք է բերել գանդան ձևերով սերմացու թեկուզ փոքր չափով, որպէսզի արտերը անմար չը մնան բոլորովին։ Գիւղացին իր բերանից կտրում է, իրան զրկում է սերմացուի համար։

Ընդհանուր առմամբ գիւղական հողերի նշանաւոր մասը ցանված կը լինի։ Սակայն, անկասկած, ունևոր և ուժեղ գիւղացին ցանել է կարգին, իսկ աղքատը շատ սահմանափակ կերպով։

Գիւղական ժողովուրդը օգտվում է գարնան բանջարներին պակասեցնելու հացի սպառումը։ Ով հնարաւորութիւն ունի կերակրվում է կաթնեղէններով։

Անշուշտ, նպաստակարգաւոր կը լինէր՝ տալ գիւղացիներին լրացուցիչ նպաստ, որպէսզի կարելի լինէր մեծացնել գարնանացանի քանակը և ընդարձակել ցանած արտերի տարածութիւնը։

Ա. Քալանթար

ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԻ 25 ԱՄԵԱԿ

—

Մի շաբաթից յետոյ, հետևեալ կիրակի օր, ապրիլի 29-ին, Թիֆլիսի Հայուհեաց Ընկերութիւնը ստնելու է իր գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։

Դա մեր նորագոյն կուլտուրական կեանքի պատմութեան տեսակէտով ունի առանձին հետաքրքրութիւն և նշանակութիւն։

Մեզանում տղամարդը դեռ շատ քիչ հասարակական-կուլտուրական գործերում տօնել է 25-ամեայ յօբելեաններ, իսկ ներկայ դէպքում մեր առաջ մի յօբելեան է հայ կանանց գործունէութեան։

Հայուհեաց Ընկերութեան շուրջը հաւաքված կանայք նպաստակ էին դրել կրթութիւն տալ հայ աղջիկներին, սովորեցնել նրանց արհեստ և դարձնել նրանց ինքնուրոյն աշխատաւորներ։ Դա գլխաւոր գործունէութիւնն էր։ Այնուհետև Ընկերութեան անդամները ժամանակից պայմանների ներածին չափ մասնակցութիւն են ունեցել հանրային մի քանի գործերում, ինչպէս ժողովրդական մի քանի մեծ աղէտների դէմ մաքառելու գործում։

Մենք տուել ենք տեղեկութիւններ Հայուհեաց Ընկերութեան գործունէութեան մասին և դարձեալ կը տանք մի քանի տեսութիւններ «Մշակի» մէջ։

Ցանկալի է, որ մեր կանայք Ընկերութեան յօբելեանի առիթով աւելի սերտ կերպով սեղմվէին Ընկերութեան շուրջը և դարձնէին նրա գործունէութիւնը աւելի ընդարձակ և բեղմնաւոր։

Մենք հաւատացած ենք, որ մեր հասարակութիւնը յարգանքով կը յիշէ Ընկերութեան գործողներին և յօբելեանի օրը կը յայտնէ, որ նա գնահատում է հասարակութեան օգտին մատուցած նրա գործունէութիւնը։

Ներկայ յօբելեանը մի վկայութիւն է, որ կանայք մեզանում ընդունակ են յարատև գործունէութեան կուլտուրական շուրջի վրա։

Այսօր այդ գործունէութիւնը տեղի է ունեցել նեղ շրջանակում, բայց նա ընտելացրել է մարդկանց հասարակական-կուլտուրական գործի, որը ապագայում պէտք է ընդարձակվի և նուաճի նոր շրջանները բարդ ծրագիրներով։

«Մշակ» լրագիրը, որ ականատես է եղել Ընկերութեան գործունէութեան, տեսել է նրա լաւ ու վատ օրերը, ողջունել է նրա նախաձեռնութիւնները և քննադատել է նրա շեղումները, յայտնում է իր ուրախութիւնը, որ Թիֆլիսի հայուհիների գործունէութիւնը կարողանում է տօնել իր 25 ամեակը և հրաւիրում է հասարակութիւնը խրախուսական ու քաջալերական իր ձայնով աւելի ևս ամրացնել Ընկերութեան գործողների եռանդը, որպէս զի նա կարող լինի ուրիշ յօբելեանների հասնել աւելի ևս մեծ գործունէութեամբ և օրինակ ծառայել կանանց գործունէութեան համար զանազան հասատութիւնների մէջ։

Ա. Բ.

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ

—

Առաջիկայ չորեքշաբթի օրը, ապրիլի 25-ին, Թիֆլիսի Ժողովարանի ամառային այգում տեղի կունենայ զբօսանք նորակազմ Տնայնագործական Ընկերութեան օգտին։

Ցանկալի է, որ Թիֆլիսի հասարակութիւնը նպաստէր զբօսանքի աջողութեանը և այդպիսով միջոցներ տար Ընկերութեանը իրագործել իր նպատակները։

Ներկայումս Ընկերութիւնը պահում է կրթական մի ջուլհականոց, որի պահպանութեան համար պահանջվում է տարեկան մինչև 3000 բուբլի ծախք։

Եթէ Ընկերութեան միջոցները մեծ լինեն, նա կարող է նաև ուրիշ արհեստների զարգացման մասին ևս հոգատար լինել և հնար կունենայ օգնել գաւառական իր ճիւղերին, որոնք կարօտ են դրամական օգնութեան։

Հասարակութիւնը պէտք է և ժամանաւոր նպաստներով օգնութեան գայ նորակազմ ընկերութեան գործողներին, որպէսզի կարելի լինի արհեստների տարածման գործը առաջ տանել մեր ժողովրդի մէջ աւելի արագ և ընդարձակ կերպով։

ԻՆՉ ԵՆ ՏՕՆՈՒՄ

—

Ամբողջ քրիստոնեայ աշխարհն այսօր կատարում է իր կրօնական ամենամեծ տօնը—ճշմարտութեան գաղափարի համար չարչարված, խաչված ու թաղված մեծ նահատակի յարութիւնը։

Թւում է թէ մարդիկ կատարելով Զատիկը, պէտք է աշխատէին վերյիշել իրանց մտքում մեծ Վարդապետի ստուգային պատգամներից գոնէ մի քանի ամենանշանաւորները—պետք է սիրել եղբօրը, ուզեցողը չուզեցողին պիտի տայ. միայն հացով չը պետք է ապրել և այլն. սակայն ոչ մի այդպիսի բան տեղի չէ ունենում, և այդ տօնակատարութիւնը ստացել է ամեն տարի որոշ ժամանակին մեքենայաբար կրկնվող լոկ ձեւականութեան նշանակութիւն միայն։

Այնինչ եթէ մարդիկ թեկուզ հէնց այդ մի օրը ամբողջ տարում աշխատէին կատարել քրիստոնէական կրօնի իրանց վրա դրած այդ պարտականութիւնները, այն ժամանակ շատ աւելի պակաս կը լինէին թշուառութիւնները մեր երկրում։

Սիրել եղբօրը—այս էր քարոզում մարդկային ազգի Փրկիչը. դրա համար նա խաչ բարձրացաւ, իսկ այսօր էլ հէնց դա է ամեն բանից աւելի մոռացված։ Մարդիկ այժմ գլխովին զբաղված են միմիայն իրանք իրանց սիրելով. եղբայրը, թեկուզ նա որքան էլ խեղճ ու թշուառ լինի, ձգված է իր բաղդին։ Ծով կարիք և անծայր թշուառութեան ամբողջ ծանրութիւնը նա միայնակ է տանում իր հիւանդ ուսերի վրա. նա անվերջ կրում է իր ծանր խաչը անմխիթար, անյոյս, անօգնական... իր բաղդաւոր եղբայրը շարունակ դարձնում է նրանից իր երեսը...։

Եթէ քրիստոնեայ մարդ-եղբայրները սիրէին միմեանց, այն ժամանակ սովը չէր պատել մեր երկրին, աղքատութիւնն այնպէս չէր տարածվիլ կարիքն ու թշուառութիւնն այսքան լայն չափեր չէին ընդունիլ...։

Մարդիկ այժմ կուռք են դարձրել իրանց սատանքը. նրան են պաշտում, միայն նրա մասին մտածում, նրանով ապրում. «խելօք» սատանքն է այժմ ընացել մարդկանց մտքերի և զգացմունքների վրա և անհասկանալի դարձուածք են դարձել այն սատուածային

50 du

խօսքերը, թէ «մարդը միայն հացով չը պիտի ապրէ»։

Եւ ահա մարդիկ մինչև ականջները խրված եսամոլութեան տղմի մէջ, միևնոյն ժամանակ ամեն տարի պարբերաբար կատարում են Ցարութեան տօնը այն Աստուած-մարդի, որ աշխարհին բերել էր բոլորովին այլ պատգամներ...։

Սա մի ողբալի ծաղր չէ։

Լ. Մարկոսեան

ՄԱՄՈՒԼ

Բէակցիոն բանակը, Դումայի արձակումը պահանջող ընդդիմները մեղադրում են Դումային սովորաբար նրանով թէ աշխատանքի անընդունակ է նա։ Այդ մեղադրանքները, «Բ. Ե.» լրագրի տուած տեղեկութիւնների, համաձայն, հաստատվում է, որ միանգամայն անհիմն են։

Դումայի մանանաժողովների մէջ լուրջ, եռանդուն և բեղմնաւոր աշխատանք է կատարվում։ Այն պայմաններում, որոնց մէջ անցնում են այդ աշխատանքները, Դումայի «աշխատանքի անընդունակութեան» մասին ընդդիմադիր խօսակցութիւնները պէտք է դադարեն։ Լրագրներում այժմ շատ լուրեր են հաղորդվում Դումայի մանանաժողովի զբաղմունքների մասին, որտեղ այժմ կենտրոնանում է Պետական Դումայի աշխատանքների ամենագլխաւոր մասը։ Մանանաժողովների թիւը օրըստօրէ աճում է։ Նորանոր մանանաժողովներ են կազմվում և աշխատանքի դիմում։ Այն մանանաժողովներում, որոնք կազմվել են աւելի վաղ, գործը այնքան է աջող կերպով առաջ ընթանում, որ հէնց Զատկից յետոյ Դումայում տեղի կունենան մանանաժողովների զեկուցումները, այսինքն, ուրիշ խօսքերով, Դումային ներկայացված օրինագծերը քննութեան կենթարկվեն և վերջնականապէս կընդունվեն Դումայի կողմից, որից յետոյ նրանք ընթացք կը ստանան Դումայից դուրս։

Իսկ եթէ մանանաժողովների աշխատանքները դանդաղ կերպով են առաջ գնում, դրա մեղաւորութիւնը ընկնում է մինիստրութեան վրա, որ հարկաւոր նիւթերը կամ չէ կարողանում տալ կամ չէ ուզում։

*

Խմբագրութիւնս ստացաւ «Մուրճ» ամսագրի մարտի համարը։ Նրա մէջ զետեղված նիւթերից առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում մեր հասարակական կեանքին վերաբերող, մեր ցաւոտ իրականութեան համար այժմէական բնաւորութիւն ունեցող յօդուածները, որոնք և մեծ տեղ են գրաւում ամսագրի էջերում։ «Դպրոցական սումբաւ և անիրաւութիւններ», «Հայրենիքի փրկիչների գործերից», «Դաւառից» յօդուածներում ամփոփված են այն բոլոր փաստերը, որոնք, արդէն հատուկտոր կերպով լոյս էին տեսել ամենօրեայ մամուլի մէջ։

Մի գործունէութիւն, որ հէնց իր շարքերում պատկառում ստեղծեց։ «Թշնամաւորութիւն և մատենախօսութիւն» բաժինը ամբողջապէս նուիրված է երկու բրօշիւրների քննադատութեան, 1) Մրաւեան՝ Դաշնակցութեան կրիվերս, 2) Բիթարդ՝ Ի՞նչու ենք անջատում Դաշնակցութիւնից։

Խմբագրութիւնը յայտնում է, որ «շատ փաստեր ապացուցանում են, որ «մեր ազգային կառավարութեան» ներկայացուցիչները իրանց բազմաթիւ ագենտներով բօյկոտի են ենթարկել «Մուրճ» ամսագիրը։ Այդ բօյկոտը աւելի ուժեղ է այն վայրերում, ուր դեռ ևս անսասան է այդ խնամակալների մոլորեցնող վարդապետութեան և անբարոյականացնող դրդելակերպի հմայքը։ Աւելի վատ իրա հայ հասարակութեան համար, եթէ նա գերադասում է ինքնախաբեութիւնը և ինքնատրկացումը անվեհեր ճշմարտախօսութեան և խօսքի անկախութեան։ Եթէ այդ հասարակութիւնը յօժարակամ դիակ է դարձել—ոչ մի գալվանական հոսանք նրան չի կենդանացնիլ։ դիակին փառաւոր կերպով կը թաղեն «ընկեր» վարդապետները և «ընկեր» խուժանապետները։ Մենք մեր պարքը կը կատարենք լսելով միայն մեր ներքին ձայնին, խղճի թելադրանքին, հաւատարիմ մեր հրապարակախօսական կոչման և պարտականութեան։

Խմբագրութիւնը թիւրքահայոց հարցի այն նոր ուղղութեան առիթով, որի արտայայտիչն է այժմ «Երկրի Ձայնը», նկատում է, որ նա արտայայտված է եղել «Մուրճի» դեռ 1906 թւականի №№ 4, 5 և 7-րդ համարներում։

ԴԷՍ ՈՒ ԴԷՆ

Հոգոր նուիրաբերութիւններ.—Օգիբիս և Բօկֆելլեր։

—

Մեծ ժողովուրդներն ունեն իրանց մեծ անկախները։ Մինչդեռ մեզանում մի քանի հարիւր կամ հազար լուրլու նուիրաբերութիւնները այս կամ այն «բարեսէր» ու «մարդասէր» անհատի կողմից, խանդավառութեան ու երախտագիտութեան խօսքերով են ողջունվում, ենթադրվում հսկայական նուիրաբերութիւններ համարեա անընդհատ են անցնում։ Արևելքում միայն՝ «բարեգործութիւնը» երգվում է երախտագէտ զգացումների ամեն լարերի վրա, որովհետև Արևելքը դեռ գտնվում է իր միամիտ զարմացման շրջանում և այնքան քիչ է վարժվել խոշոր ժեստերի։ Արևմուտքում հսկայական նուիրաբերութիւնները համարեա սովորական դէպքեր են և այնտեղ կապիտալիզմի արագ զարգացման շնորհիւ հարստութիւնները այնքան շուտով են կենտրօնանում անհատների ձեռքում, որ այդ բաղդաւոր անձինք, «օրինաւորապէս», օրէնքի հովանու տակ անսահման մասսաները «պլոկելուց» յետոյ, իրանց յորդող հարստութեան առաջ գրՙթէ ստիպված են զգում իրանց մի քիչ բաց անել փրփրացող ոսկիների հեղեղի լերանը և՛ իրանք հանգստանալու, և՛ ուրիշներին հանգստացնելու համար։

Մարդ կարդալով եւրոպացի կամ աւելի ճիշդ ամերիկացի միլիոնատէրերի հրաշալի պատմութիւնը, անկարող է լինում իրան հարց չը տալ. «Ինչպէս անհատին աջողվում է դրդել այնպիսի գանձեր, որոնց ստեղծելու համար, առանց «պլոկելու», այո, առանց «պլոկելու», սերունդներ ու սերունդներ են հարկաւոր։ Ինչպէս, օրինակ, մի բանուոր, կամ մի աշխատաւոր, որը զուրկ է հրաշագործ կապիտալից, տարիներ շարունակ, իր կեանքի ամբողջ ընթացքում, անդուլ-անդադրում, արիւնքրտինք թափելուց յետոյ, մինչդեռ հազիւ կարողանում է մի կերպ պահպանել իր գոյութիւնը, անհատը՝ զինված կապիտալով, կուտակում է, ամբոխները, իրանց ծնունդից մինչև վախճանը փառաւորապէս ապրեցնելու չափ հարստութիւններ»։

Որովհետև մէկը՝ կապիտալի տէր անհատը՝ ազատցնում է իր նման մի գլուխ, երկու ոտքերի և երկու ձեռներ ունեցող անթիւ անհատների, իսկ միւսը՝ բանուորը, մասնաւորապէս ֆիզիկական բանուորը, զրկված կապիտալից, աշխատում է միայն ինքը և չէ իւրացնում ուրիշի քրտինքը։ Հակառակ դէպքում, վերցրէք հէնց այդ խոշոր նուիրաբերութեան հերոս միլիոնատէրերից մէկին՝ Բօկֆելլերին, դրէք մի գործարանում, և նա թող աշխատէ օրքան ցանկանայ, գլխէր և ցերեկ, նոյնիսկ երկարեցէք նրա կեանքը դարերով, և նրա համար, առանց կապիտալի օգնութեան, անհնարին կը լինի ոչ թէ միլիարդներ, այլ նոյնիսկ միլիոններ շեղելը։

Ահա ինչու համար, երբ մարդիկ նստում են իրանց նմանների աշխատանքի վրա, ինչպէս հաւը ձուերի վրա, երբ մարդիկ լողում են ուրիշների քրտինքի ծովում, երբեմն, երբեմն վեր են կենում ու ցոյց տալիս իրանց «ազնիւ» զգացմունքը, իրանց «մարդասիրութիւնը»։ Եւ դա օրքան բնական է համարվում «մարդասէր»-ների կողմից, նոյնքան բնական է համարվում «մարդասիրված»-ների անտարբերութիւնն ու ատանձինութիւնը այդ «վերսեմ գործի» առաջ։ Որովհետև, եթէ Արևելքը ոգեշ, անգիտակից՝ ընդունակ է միայն զարմանալու, Արևմուտքը խելաս ու խորաթափանց՝ գիտէ ամեն փայլուն իրի ոսկի անունը չը տալ։

Եւ այդ գիտակցութիւնը Արևմուտքում, Ամերիկայում, նոյնիսկ այն ատեան շեշտվել է, որ եղել են դէպքեր, երբ «բարերարվողները» իրանց «բարերարի» երեսին են շպրտել նրա նսկայական նուիրաբերութիւնը։ Այդպէս դէպք պատահեց, եթէ չենք սխալվում, յայտնի հարուստ Կարնեգիի հետ։

Ա՛, այդ եանկիները! Միշտ տարօրինակ! Տարօրինակ և՛ «բարերարը» և՛ «բարերվողը»։

Բայց արձանագրենք այդ «բարերարների» սխրագործութիւնները։ Դուցէ այժմ, երբ սահմանից այս, ինչպէս այն կողմը սով է, երբ մարդիկ, որոնք աշխատում էին ուրիշներին հաց տալու համար, և իրանք այժմ հաց են կողկողում, գանվեն «բարերարներ», որոնք զգան, թէ ժամանակ է բժին հանելու իրանց գանձերից և բաղդի այդ խորթ զաւակների համար, փոյթ չէ տասնեակներով կամ հարիւրներով, եթէ հազարները չեն շարժվի իրանց տեղերից, վատահ լինելով, որ նրանց «բարեգործութիւնը» չի հանդիպի... ամերիկեան դժուարահաճութեան։

Այսպէս, Ֆրանսիայում ապրում էր, հրէական ծագումից, մի բարի մարդ, Դանիէլ Օսիրիս անունով։ Օսիրիսը Բորդօ քաղաքում հսկա ճարտար էր իր ապրուստը, երբ մտաւ մի բանկային հաստատութեան մէջ, Միրէ գրամատուում։ Եւ ինչպէս սովորաբար ասում են, Իսրայէլի այդ զաւակը տուեց «իր աշխատասիրութեան ապացոյցը»։ Այդտեղ նա այնքան բարտօրեց իր նիւթական դրութիւնը, որ չօմաղը ճճճելով, վաղից դէպի կիրճը՝ մուտքը բռնելու համար, արագ-արագ արտասանելով.

—Շուղիկ, վեր կաց, քշիր նախիրը գիւղ և ասա, որ տղերքը հաւաքիս հանենն։

—Կաց, կաց, ապա—իր մանկական զիլ ձայնով պոռաց Շուղիկը—ահա նրանք գալիս են։

Համփօն յետ նայեց, գլուղից խառնիխուռն վազում էին Ջահիլ տղերքը, թնդացնելով օդը իրանց ռազմական աղաղակներով։

—Հօ, Համփօ, հօ Համփօ, սպասիր, սպասիր։

Եւ Համփօյին հետզհետէ շրջապատեցին իր հասակակից ընկերները, գիւղի պրօլետարիատ, հողագործ և հատիա երիտասարդները, զինուորված, որը չօմաղով, որը եռաժանիով, որը թրով, որը չամախի հրացանով, որը նոյնիսկ Մաուզերի հրացանով, տարբեր ձևերով։

—Տղերք, ասաց Գիքօն, արծաթափայլ հրացանը վեր բարձրացնելով, կորցնելու ժամանակ չը կայ. ընտրենք խմբապետ և դիրքեր բռնենք։ Այդ անիծածները կարող են ամեն րոպէ երևալ։

—Սաքօն խմբապետ է, իսկ Համփօն նրա օգնականը։ Տուէք Համփօյին մի լաւ Մաուզերի հրացան, դուռային ամեն կողմից տղերքը։

—Ուրրա, ուրրա Սաքօ և Համփօ։

—Զօմաղս էլ բաւական է, ասաց Համփօն, այդ անիծեալ քեօլանոներին ջարդելու համար։

Եւ նա նորից ճճճելուց հետո չօմաղը օդում, Պաշտպանների խումբը դիմեց դէպի կիրճը։

Մի ակնթարթում հարկաւոր դիրքերը բռնվեցին, պատնէշներ և ամբարանոցներ շինվեցին և տղերքը պատրաստ էին ընդունելու թշնամուն։

II

Ն. գիւղի բոլոր կարիճները հաւաքվել էին Ամրողջ օրը Համփօյի հոգին խռոված էր. նա կարծես ընդդիմամբ մի մռայլուտ ապագի վտանգն էր զգում, մի դժբախտութեան հոտն էր առնում, բայց թէ որտեղից պէտք է գայ այդ ապագը, այդ դժբախտութիւնը, նա չէր կարողանում գուշակել։ նա միայն զգում էր, որ մի ապագ պատահելու է. այդտեղից առաջ եկաւ և նրա վճռականութիւնը՝ նախիրը սովորականից աւելի վաղ գիւղը քշելու։

Կիրճի մուտքին, նրա սրինգը նորից թնդաց։ Նրա սիրուը աւելի և աւելի ճմլվում էր և երբ նախիրը, դուրս գալով կիրճից, սփռվեց դաշտի վրա, որի ծայրին տեսնվում էր Ն. գիւղը և նա նկատեց, որ իր փոքրիկ քոյրը, Շուշանիկը, ոտաբոբիկ, սրբշաւ վազում էր դէպ իրան, նա այլ ևս ոչ մի կասկած չունեցաւ ժողովուրդ ապրի մասին։

—Տէր, ասաց Գիքօն, արծաթափայլ հրացանը վեր բարձրացնելով, կորցնելու ժամանակ չը կայ. ընտրենք խմբապետ և դիրքեր բռնենք։ Այդ անիծածները կարող են ամեն րոպէ երևալ։

—Սաքօն խմբապետ է, իսկ Համփօն նրա օգնականը։ Տուէք Համփօյին մի լաւ Մաուզերի հրացան, դուռային ամեն կողմից տղերքը։

—Ուրրա, ուրրա Սաքօ և Համփօ։

—Զօմաղս էլ բաւական է, ասաց Համփօն, այդ անիծեալ քեօլանոներին ջարդելու համար։

Եւ նա նորից ճճճելուց հետո չօմաղը օդում, Պաշտպանների խումբը դիմեց դէպի կիրճը։

Մի ակնթարթում հարկաւոր դիրքերը բռնվեցին, պատնէշներ և ամբարանոցներ շինվեցին և տղերքը պատրաստ էին ընդունելու թշնամուն։

II

Ն. գիւղի բոլոր կարիճները հաւաքվել էին Համփօն, շարժելով չօմաղը. կարծես եռանից մի ուրուական հալածում էր նրան և զրդում շտապել, փախչել, շուտով գիւղը հասնել։

Ամբողջ ճանապարհին Համփօն մտածեց մի կողակցի մասին և ամուսնացաւ։ Դժբաղդի կինը մեռաւ, թողնելով երկու որբ երեխաներ, որոնք նոյնպէս գնացին իրանց մօր ճանապարհով։ Դանիէլ Օսիրիսը, որովհետև շատ էր սիրում իր կնոջը, (միշտ այդպէս է լինում, մեռածներին շատ են սիրում), նորից չամուսնացաւ։ Ասենք կարիք էլ չէր կար։ 1880 թ. պ. Օսիրիսն ունէր տասը միլիոնի մի ընչին հարստութիւն, որը քիչ ժամանակվայ ընթացքում կարողացաւ ենգապատել, այսինքն դարձնել յիսուն միլիոն։ Բարի մարդը հիւանդոտ էր, (այդ ամենևին չէր պատկերում սակայն, որ աշխատէր, ոչ թէ ինքը, այլ իր միլիոնները), երեկոյանքի հիւանդութեամբ էր տառապում։ Ժառանգից զուրկ, մտածեց բարերարութիւն անել և խնդրեց Ֆրանսիայի Հանրապետութեան նախագահ Էմիլ Լուբէից, որ իր կտակատարը դառնայ։ Եւ Էմի կտակով 25 միլիոն թողեց Պասթէօրեան հիմնարկութեան, մի ընտրութիւն, որի համար կարելի է միայն գովել։

Բացի դրանից, հանգուցեալ պ. Օսիրիսը (նա մեռաւ 82 տարեկան) Տուր-Բլանշի իր դղեակը կտակեց երկրագործութեան մինիստրութեան, Արկաշօնի դղեակները՝ նոյն քաղաքի խորհրդին, չորս պալատներ՝ Պարիզի քաղաքային խորհրդին և իր գեղարուստական հաւաքածոները՝ պետութեան։

Նրա այս յուսիչ բարերարութիւնները բոլոր թերթերն ու բոլոր հեռագրները հռչակեցին, որոնցից յետ չը մնաց նոյնիսկ մեր Պետերբուրգի Հեռագրական Գործակալութիւնը, որի սէրը, դէպի ռուս մարդիկ և նրանց պատգամաւորների պերճախօսութիւնը մինչև հանգածանօթ է։

Իսկ երկրորդ բարերարը աւելի յայտնի անձնաւորութիւն է, Ջոն Բօկֆելլեր, որը կոչվում է նաւթարքայ իշխան տիտղոսով։

Այդ մարդը, որը այնքան օրլյար ունի, որքան ես կամ, ընթերցող, դուք միասին գլխի վրա մաղ չունենք (պայմանով սակայն, որ դուք ճաղատ չը լինէք, որովհետև ես այդ բարեհանութիւնից զուրկ եմ... նկատի ունենալով ի հարկէ ամառվայ գաւառը)։ Ամերիկայի Ուսումնասիրական Ընդհանուր Խորհրդին նուիրեց 32,000,000 դոլլար կամ 6,400,000 սուերլինգ։ Սա ամենախոշոր նուիրաբերութիւնն է, որ կատարած լինի մի «բարերար» մի անգամից։ Այդ նուիրաբերութիւնը առաջինը չէ սակայն։ Նոյն Բօկֆելլերը մինչև հիմա զանազան առիթներով, միևնոյն նպատակների համար յատկացրել է 90,000000 դոլլար։ Եւ, ինչպէս հաղորդում է իմ յօդուածի աղբիւրը, «Թայմս»-ի Թղթակիցը, նաւթային իշխանը նուիրաբերել է և՛ 30 դոլլար այլևայլ նպատակներով առանց անունը յայտնելու։ Թէ՛ ինչպէս, այժմ, առանց անունը յայտնելու, յայտնված է այդ անունը, գաղտնիքը հարցնելու է իմ աղբիւրից։ Պետական համալսարանները բաժին չը պիտի ունենան այդ գումարներից։ «Պէտք է նկատել, ասում է իմ ուղեցոյցը, որ հակառակ այսքան խոշոր նուիրատուութեան, ամերիկեան թերթերում շնորհակալութեան մի բառ անգամ չէ արտաբերվում։» Այս բանը համարվում է, յիշեալ թղթակցի կարծիքով, ամերիկացու բուռն նկարագրութեան նշաններից մէկը դէպի փողի իշխանները։ Այդ թերթերը ամենաշատը բաւականանում են շեշտելով նուէրի իսկատուն գործադրութեան վրա։ Ոմանք, որպէս շնորհակալութիւն, յայտնում են, որ «Բօկֆելլերի ըմբռնումը մարդասիրութեան մասին, այնքան տպաւորութիւն է գործում։ որքան նրա ըմբռնումը, առաքինի ասպարէզի մասին»։

Բայց ինչ ամենից աւելի հմայիչ է, այդ այն յայտարարութիւնն է, որ արել է ինքը այդ փողի հերոսը։

—32,000,000 դոլլարի նուիրատուութիւնն, ասել է Բօկֆելլեր, ինձ համար աւելի փոքր մի զոհաբերութիւն է, քան շատերի կողմից զանձանակներում զցված պէնիները, կօպէկները։

Հիմա դուք ինքներդ ասացէք, արժէ՞ զարմանալ, արժէ՞ հիանալ։

Զատիկ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՍԱՐԱՆՈՒՄ

—

Ապրիլի 20-ին 6-րդ քաղաքամասում, Պարոնբէկովի քաղաքապարանում տեղի ունեցաւ ժողովրդական համալսարանի թուրքական սեկցիայի դեկավարութեամբ մի դասախօսութիւն թուրքերէն լեզուով՝ «օրի և ջրի» մասին։

Դասախօսում էր թուրք գրող Ավերդօվը։ Քարվանսարայի հրապարակը և պատշգամբը լի էր 150-ի չափ ունկնդիր հասարակութեամբ, սկսած ուսանող երիտասարդներից մինչև ծերերը։ Ներկայ էին մի քանի հայ ինտելիգենտներ ևս։ Ունկնդիրները մեծ հետաքրքրութեամբ լսում էին դասախօսին, որ բացատրում էր ժողովրդին բոլորովին մատչելի լեզուով և մի քանի փորձերով, թէ և ոչ այնքան աջող։ Դասախօսին վերջում երեք անդամ բուռն ծափահարութեամբ շնորհակալութիւն յայտնեցին։

Վերջում «Մօլլա-Նասրէդդինի» հրատարակիչ Զալիլ-աղա Դաւլի-զադէն դիմելով ժողովականներին յայտնեց, որ անհրաժեշտ է այսպիսի դասախօսութիւնների համար յարմար շինութիւն ունենալ, որովհետև քարվանսարան մեծ անյարմարութիւններ ու պակասութիւններ ունի։ Այդ պատճառով առաջարկեց օգուտ քաղել Զուբայօվի ժողովրդական տան շինութիւնից, որից առ հասարակ այդ նպատակի համար օգտվում են մեծ ազգութիւնները։ Ժողովականները համաձայնութիւն յայտնեցին յաջորդ ուրբաթ դասախօսութիւնը գնալ այնտեղ։

Փորձը ցոյց կը տայ թէ որքան թուրք ժողովուրդը գնահատում է իրանց լուսաւորութեան համար գործադրված ջանքերը։

Դասախօսութիւնը տեւեց մի ժամ և ժողովուրդը ցրվեց գոհ սրտով։

Լ.

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

—

Ապրիլի 15-ին տեղի է ունեցել Պետական Խորհրդի նիստը, որտեղ առաջին անդամ նախագահել է նոր նշանակված նախագահ Ակիմովը։ Ժողովը պէտք է յայտնէր իր կարծիքը այն առիթով, որ սենատը մերժել էր հրատարակել նկատելը։ Այդ նկատելում կայ երկու կէտ՝ 44 և 45, որոնք կապած առիթ են տուել սենատին։ 44-րդ կէտի մէջ խօսվում է էքսպերտների մասին, իսկ 85-ղում այն պարտականութիւնների մասին, որոնք դրված են մինիստրների և գլխաւոր կառավարիչների վրա։ Խորհուրդը որոշել է սենատի այդ որոշումը յանձնել Խորհրդից ընտրված մասնաժողովին քննելու։ Խորհրդի նիստից յետոյ Ակիմովը ծանօթացել է Պետական Խորհրդի պաշտօնների հետ և, ի միջի այլոց, զրուցել է Կօվալէվսկու հետ։ Ակիմովի նախագահութեան մասին ընդհանուր տպաւորութիւնը չափազանց անհաստատ է։ Նա արդէն հէնց առաջին նիստում նկատողութիւն է արել ճառախօսներից մէկին—Կամենսկուին։ Նիստը դեկավարել է չափազանց կցկտուր կերպով, խօսել և վարվել է անդամների հետ մի փոքր խառնօրէն։

(«Новь»)

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

XII

Դուման դեռ զբաղվում է։

Գերիշխող տրամադրութիւնների անընդհատ տեղատուութիւնից ու մակընթացութիւնից յետոյ, կառավարչական շրջանները ժամանակաւոր լռութիւն է տիրում։ Երևի բարձրասէր ինտրիգանները և նրանց զինակից սեհարիւրեակայինների «խոփը» քարին դէմ առաւ։

Այժմ ժողովրդական ներկայացուցիչների լարված ջղերը հանգստացել են և նուիրվել իրանց վրա դրված պատականութիւններին ու աշխատանքներին։ Բեղմնաւոր գործունէութիւնը մասամբ ապահովված պէտք է համարել։

Սակայն երկար, արդեօք, կը տեւի այդ խաղաղ կացութիւնը։

Ռուսական իրականութիւնը այնքան հակասական, այնքան անակնկալ տխուր փաստերի է տուել, որ դժուար թէ կարելի լինի հաստատել կառավարող շրջանների անկեղծութեանը։ Նրանք հաղիւ թէ քաջութիւն ունենան լուռ ու հանգիստ մնալու։

Շատ հիմքեր կան կարծելու, որ ինտրիգները խուլ կերպով շարունակվում են։

Մեր նախորդ յօդուածում մենք մատնանշել էինք պրօֆեսոր Մարտենսի պաշտօնական և ոչ-պաշտօնական միտքերի մասին արտասահմանեան կարծիքի նկատմամբ։ Այժմ էլ հանդէս է գալիս մի ուրիշ պրօֆեսոր, կիեվում «հաժողմունքով ջարդարարի» համբաւ վայելած, Պիլինսն, որ իշխանութեան հանձարոտութեամբ ստանձնել է Ռուսաստանի ներքին կեանքի վերաբերմամբ նոյն դերը, ինչ որ Մարտենսը արտասահմանում։

Մարտենսը և Պիլինսն իրանց ձգտումներով երկուրեակներ են։ Մարտենսը արտասահմանում և բարձր շրջաններում, Պիլինսն Պետական Խորհրդի մէջ ամեն ջանք գործ են դնում Դուման տապալելու և ինչ խօսք, որ Գուրիչ կեվիչն էլ իր շքախմբով ձայնակցում է նրանց, աշխատելով ատիթներ ստեղծել Դումայում։

Ինչպէս արդէն յայտնի է, մինիստրների կաբինետը որոշեց Դուման չարձակել։ Այդ հանգամանքը ընականօրէն լքումն պէտք է առաջ բերէր Դումայի արձակումը պահանջող սեհարիւրեակայինների շրջանում, և ահա Պիլինսն շտապեց իր «Кіевлянинъ»-ի միջոցով հանգստացնել իսկական-ռուս ընթերցողներին, որ շրջաններում՝ Դուման արձակելու անհրաժեշտութեան և անխուսափելիութեան գիտակցութիւնը արագութեամբ հասունանում է։

Սակայն աւելի ուշադրաւ է այն ինտերվիուն, որ ունեցել է նա արտասահմանեան մի ինչ որ թերթի հետ։

Դուման,—ասել է Պիլինսն,— յեղափոխութեան օջախն է և սպասելիք է կազմում Եւրոպայի համար։

Ո՞ւրիսի գեհաստութիւն։

Իր հարենիքի համար չարիք դարձած սեհարիւրեակայինների այդ «հաժողմունքով ջարդարար» պարզապէս հոգածութեան առարկայ է դարձնում Եւրոպայի հանգստութիւնն ու բարեկեցութիւնը։

Բայց, մի՞թէ Պիլինսն իսկապէս Եւրոպայի դարդն է քաշում։ Ամենևին ոչ։ Նա ձգտում է տապալել Դուման. և ահա կը ցանկանար, որ Եւրոպան ոչ միայն ոչ մի արգելք չը յարուցանէր, այլ և նպաստէր այդ գործում։

Եւ որովհետև Պիլինսն գործում է իշխանութեան համաձայնութեամբ, ուստի պէտք է կարծել, որ կառավարչական շրջանների տրամադրութիւնն ու ծրագիրները էլ նոյնն են։

Թւում է որ Պիլինսի այդ ասածների մէջ կայ մի ինչ որ կարևոր գաղտնիք։

Այդ կարծիքը կարծես թէ շտապում է հաստատել և մինիստրական կաբինետի մուտիտիկ «Россія» լրագիրը։ Պիլինսյի նման նա էլ է յեղափոխական անուանում Դուման։ Նրա ասելով Դումայի մեծամասնութիւնը, ամբողջ ձախակողմը կադետների հետ միասին, ձգտում է մի նպատակի, այն է՝ յեղափոխութեան։ Դուման, նրա կարծիքով, մի կազմակերպված կրմօլա է. «միտինգներ է կազմում, վերաւորութիւններ հասցնում դատարանների հասցէին, պախարակում է զօրքը և ծաղրում օրէնքն ու իշխանութիւնը»։

Եւ այդ բոլորից յետոյ դեռ ուզում են, որ չը քշեն Դուման...

Ախր ինչ բանի համար. նրան պահեն։ Մասնաժողովներում աշխատելու միայն... Բայց չէ՞ որ նրանց անընդհատ աշխատելու մասին տարածված լուրերը կադետների երևակայութեան պտուղներն են։

Այդպէս են մտածում ու դատում Դումայից սարսափող և նրա գոյութիւնը թշնամի բիւրօկրատները...

Այդպէս է վերաբերվում պաշտօնական բեպտիլը Պետական Դումային՝ Թօլստոյի ունկնդրութիւնից ամբիոնակս յետոյ։

Զր նայելով դրանց, մաքերը արդէն խաղվել են և հակառակ Պիլինսի Մարտենսների յարուցած ինտրիգներին, եռանդով շարունակում է իր գործը։

Սպասեցող ուրուականը զրկված իր հմայքից, մտորում է խուլ անկիւններում և նոր դաւեր ծագրում գալոց օրերի և պատեհ բոպէների համար։

Z.

ՍԵՆՍԱՑԻՈՆ ԼՈՒՐԵՐ

—

Լօնդոնի «Daily Telegr.» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ շուտով հրաժարական է տալու մինիստրական կաբինէտի բէակցիոն մասը, որոնց թւում և Շվանեբախը։

—Ռուս ժողովրդի դաշնակցութեան միութիւնը դուրս է եկել լպերութեան սահմաններից։ «Русск. Знамя» լրագրի վերջին համարներից մէկում տպագրված է հետևեալը. «Թագաւոր, մի յետաձգէք Դուման արձակելու օրը, ապա թէ ոչ ուշ կը լինի։ Քեզ վրա մի ամպի այն արիւնը, որ անխուսափելիօրէն պէտք է թափվի, եթէ դու դանդաղելու լինես։ Պայթիւնը մօտ է, Թագաւոր!»։

—«Слово» լրագիրը մօտ օրերս հաղորդել էր, որ Պ. Ն. Միլիւկովը ժողովրդական ազատութեան կուսակցութեան լիդերների առաջարկութեամբ գնում է Շվեյցարիա։ Այդ ասելով «Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ վերջին ժամանակներս սեհարիւրեակային տարրերը խիստ կերպով հետամուտ են լինում Միլիւկովին, այնպէս որ կադետների լիդերները, ի նկատի առնելով նրա կեանքի դէմ սպառնացող վտանգը, երեք երիտասարդներ են նշանակել, որոնք ժշական ուղեկցում են նրան։ Միլիւկովը իրան շատ անյարմար զգութեան մէջ է զգում, որովհետև նա գրանով վտանգում է բոլորովին կողմնակի անձանց կեանքը։ Սակայն այդ պահանջները նշանակված են կազմակերպութեան պահանջով, հակառակ իր ցանկութեան։ Ինչ վերաբերում է արտասահման գնալուն, իրան բոլորովին յոգնած զգալով, Պ. Ն. Միլիւկովը դեռ ևս մի ամիս առաջ պատրաստվում էր գնալ հանգստանալու, իսկ ներկայումս նա վճռել է օգուտ քաղել Դումայի զատկվայ տօների արձակուրդներից և կարճատև կերպով հանգստանալու գնալ, իսկ Զատկից յետոյ նորից կը վերադառնայ Պետերբուրգ։

—Ներքին գործերի մինիստրի կողմից նահանգապետներին, գեներալ-նահանգապետներին և քաղաքապետներին ուղարկված են շրջաբերական կարգադրութիւններ, որով առաջարկված է ապրիլի 20-ին զինուորական-դաշտային դատարանների գոյութիւնը վերջանալու առիթով թոյլ չը տալ որևէ ցոյց, միտինգ և ժողով անելու։ («Парусъ»)

—«Новь» լրագրի տեղով, հէնց որ ոստիկանական դեպարտամենտը փոխեց իր վերաբերմունքը դէպի ռուս ժողովրդի միութիւնը, ամեն կողմից տեղեկութիւններ ստացվեցին դեպարտամենտում, որ միութեան տեղական բաժանմունքի անդամները արհամարհանքով են վերաբերվում դէպի ոստիկանութիւնը, չեն կատարում նրա կարգադրութիւնները և Պետերբուրգում ունեցած իրանց կապերի վրա յենվելով, սպառնում են պատժել նրան։

—«Сегодня» լրագրին աջողվել է ծանօթանալ այն անանունացուցակի հետ, որոնց դէմ իսկական ռուս մարդիկ վճռել են յամառ կռիվ մղել և վճռական միջոցներ ձեռք առնել նրանց ջնջելու համար, յանցաւոր և կորստաբեր գործունէութեան ատիթով պատասխան համար։ Այդ ազգանունները հետևեալներն են. Միլիւկով, Հեսսեն, Ն. Դ. Սոկոլով, Գրուդզեբերդ, Կոգան, Ա. Ա. Սուվորին, Խարիսօն, պատգամաւորներ Ալեքսինսկի, Տերեշեվիչ, Զաքարիէ, Մակլաքով, Տեսլենկո, Օզոլ, քահանաներ Տիվլինսկի և Գրիգորի Պետրով, Թօլստին և Բերեսոլին։ Ապա Միակոտին, Ն. Ֆ. Անենսկի, Օդեսայի քաղաքագլուխ Գրիգորիով, արդարադատութեան մինիստր Շչեգլովիտով, կոմս Վիտտէ, պրոֆ. Մաքսիմ Կովալեվսկի, պոլիտեխնիկումի նախկին դիրեկտոր Իշ. Դագարին, Մոսկվայի հրէա համայնքի բարի Մաղ, առևարի և արդիւնաբերութեան նախկին մինիստր Ֆէդորով, երդուեալ հաւատարմատար Սլիւզբերգ և ուրիշները։ Այդ ցուցակը զարմի են պահում իրը թէ, բայց արդէն յայտնի է դարձել։

ԹԱՏՐՈՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Թերասանական այն խումբը, որ տիկին Սիրանոյշի և Աբելեանի ձեռնարկութեամբ գնացել էր Անդրկասպեան երկիրը ներկայացումներ տալու նպատակով, այցելել է երեք քաղաք՝ Կրասնովոդսկ, Ասխաբադ և Մերվ։

Ներկայացումները սկսվել են Կրասնովոդսկում Մեծ Պասի երկրորդ շաբաթից և՝ վերջացրել են Մերվում հինգերորդ շաբաթում։

Կրասնովոդսկում տրվել են 2, Ասխաբադում 8, Մերվում 3 ներկայացում։

Ներկայացել են «Մեղէա», «Զաւակ», «Հայրենական տուն» «Անմեղ մեղաւորներ», «Դաւաճանութիւն», «Հավէտ», «Ոճրագործի ընտանիքը», «Ցօսկա»։

Խաղի ամսականը եղել է 1535 փայեր։ Իւրաքանչիւր փային ստացվել է 1 ր. 84 կոպէկ, չը հաշուելով ճանապարհածախքը։

Ներկայացումները առհասարակ լաւ ընդունելութիւն են գտել Անդրկասպեան երկրի հասարակութեան մէջ։

II

Թիֆլիս են վերադարձել դերասանական բոլոր խմբերը։

Աբելեանը կազմակերպում է նոր դերասանական խումբ Հանքային Ջրերի շրջանի համար և արդէն պայմանաւորվել է դերասանների մի մասի հետ։

Զատկի տօներին Աբելեանը հրաւիրված է Բաքու մի քանի ներկայացումներ տալու «Կուլտուրական ընկերութեան օգտին»։

Տիկին Սիրանոյշ իր նորակազմ խմբով ուղևորվել է Երևան մի շարք ներկայացումներ տալու Զատկի տօներին։

ԶԱՏԿԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

(Ոչ հեռագրով)

—

Աղէտեալներին.—Հայելի՝ Թիւրքահայերին ցոյց տալու համար։

Թիւրքահայերին.—Մրցանակներ՝ ռուսահայ աղէտեալների հետ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱԼԼԱ ՍԱՆԱՄԸ

(ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ)

I

Տաւարած Համփօն փչեց հովուական սրինգը մի քանի անգամ և ձեռքն առնելով չօմաղը, սկսեց հաւաքել նախիրը։

Բայց նախիրը դանդաղ էր հաւաքվում ձորակի մէջ, աղբիւրի մօտ, որտեղից ամեն օր սկսվում էր ջուն դէպի գիւղը։

Կովերը և արջառները կարծես զարմացել էին, որ այդ օր սրինգը աւելի վաղ թնդաց. իրար պլոգած նայելով, կարծես հարցնում էին իրար. ինչ է պատահել մեր

Հայ պատգամաւորներին.—Աղճմանք՝ ներկայացուցչական պատասխանատուութիւնը զգալու համար։

Պեսական Դումային. — Իրագործված պարտաւոր։

Գիւղացիներին.—Ազնիւ և անկեղծ պաշտպաններ։

Կադէտներին.—Պատասխանատու մինիստրութիւն։

Տպարաններին.—Թլված տառերի վերադարձ։

Լրագրագիտներին. — Նոր լրագիրների անուններ բառարան՝ փակվածների փոխարէն։

Շեմարանի պրոֆէսորներին.—Պրոֆեսորական նախապատրաստութիւն։

Էջմիածնին.—Երկրորդ կենտրոնական ժողով նախկին կազմով։

Տեսուչ Մեսրոպին.—Մի այնպիսի մարգարէ, որ իր գաւառում պատիւ չունի։

Շեմարանի աշակերտներին.—Դիսերտացիա այն հարցի մասին, թէ ո՞վ էր ներշնչողը, ո՞վ էր գործիքը, ո՞ւր միայ արդարութիւնը։

Գիւղատնտեսական ընկերութեան.—Կալի բրօմատ ջրային գործունէութիւնը մեղմացնելու և մօրթի փոքր ինչ թմրութիւն բերելու համար։

Ժողովրդական համալսարանին.—Լսողներ բուն ժողովրդից։

Մեր կեղծ սոցիալիստներին.—Տիրացուական զրքակալներ։

Կրանօվսկի տառապեալներին.—Արդար դատաստան։

Դերասաններին.—Մի գուշակող, որ ասէր թէ ինչ է որդել նրանց մասին զրամատիկական ընկերութիւնը։

Զախակողմեաններին.—Սեփական դէմքիր՝ դիմակների փոխարէն։

Դաշնակցականներին. — Հանելուկների ժողովածու։

Հայ ռամկավարներին. — Խոստացված համագումարի իրագործում։

Մշակականներին.—Ազատ մթնոլորտ՝ ազատ ժողովրդական գործունէութեան համար։

Բարեգործական ընկերութեան.—Աղքատների նմուշներ բարեգործութեան համար։

Տնայնագործական ընկերութեան.—Զբօսանքի շրջագիծ ապրիլի 25-ի համար։

Ուսուցիչներին.—Երգչական առաջիկայ աշխատանք։

Ուսուցչական միութեան.—Մի քանի հարցանչաններ։

Ծայրահեղ կուսակցութիւններին.—Արջի ծառայութիւն մատուցանողներ Պետական Դումայում։

Բանւորներին. — Կապիտալիստների ատելի։

Գործադուլաւորներին.—Փողոցում պետութեան մէջ։

Ատանութեաններին.—Մշտական Զբօրնէք, Բարեկենդան և Զատիկ։

Թիֆլիսի Ժողովարանին. — Անուրդ գարնան զբօսանքների կապալի համար։

Թափառականներին. — Տափարակի ու սարի մէջտեղը անայրութիւն։

Նստակեացներին. — Տափարակում, սարում ու մէջտեղում հաստատ բնակութիւններ։

Նպաստամատոյց Յանձնաժողովին.—Առատ բերք այս տարի և կօնդակ նրա գործունէութեան աւարտման համար։

Դումայի աշխատաւորականներին.—Կուսակցական որոշ ծրագիր։

Տէրէէրներին.—Ծիսակատար ժողովուրդ՝ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան.—Անձայն ձայնաւորներ։

Էկսպրօպրիատորներին. — Խմբագրութիւնների և բարեգործական հիմնարկութիւնների դրամարկղները։

Ներսիսեան դպրոցի լսարանին.—Ուսանողներ բոլոր համալսարաններից։

Հատպայի կօնֆերենցիային.—Նոր զինանոցների յատակագծեր։

Բագուի նաւատերերին.—Գործադուլ՝ բայց ոչ այժմ, այլ ձմեռը, նաւադնացութիւնից յետոյ։

Մեր ընթերցողներին.—Հաւատ դէպի զարգացման յաջողանկը։ Եւ այնուհետև շնորհաւոր Զատիկ։

Վրէժ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 17-ին

Ապրիլի 13-ին Ներսիսեան դպրոցի Սօլոլակի բաժանմունքում նշանակված էր ամբողջ աշակերտութեան և Հոգաբարձութեան ներկայացուցիչների մի խորհրդակցական ժողով, ուր քննութեան առարկայ պիտի լիներ VII դասարանի անցեալ, ներկայ և ապագայ դրութիւնը։

Ժողովի սկզբում աշակերտութիւնը առաջարկում է ընտրել նախագահ։ Մինչև նախագահ ընտրելը՝ նախագահում է Հոգաբարձու պ. Կաճկաճեանը։

Դիրքում են աշակերտներից մի քանիսը և իրանց խօսակցութեան ժամանակ յայտնում են այն միտքը, որ անհրաժեշտ է նախագահ ընտրել։

Պ. Խաժակը, որ ներկայ էր այդ ժողովին, բարձրանալով ամբիօն, բռնում է նախագահի աթոռը ու ցանկանում է ձայներ տալ խօսելու համար։

Աշակերտութիւնը չի կարողանում տանել այդ կամայականութիւնը պ. Խաժակի կողմից և պահանջում է թողնել նախագահի աթոռը։

Պ. Խաժակը գոռում է նրանց վրա և անւանում է мальчишка նոր։

Աշակերտութիւնը սաստիկ զայրանալով՝ պահանջում է թողնել ամբիոնը և ուզողպատրաստ չէրառնալ դասարանի զլխին։

Աշակերտներից մէկը Ար.—Մ.—բարկացած նկատում է. «Մենք ձեզ չենք ընտրել նախագահ, ինչ էք բռնութիւն գործ դնում աշակերտների վրայ. բաւական է։»

Պ. Խաժակը՝ որ յաւակնութիւն ունի կըրթելու և դաստիարակելու մեծաղ սերունդը և առաջնորդելու նրան դէպի ճշմարտութիւնը և արդարութիւնը, ամբիոնից խօսքն իջնելով վազում է աշակերտ Ար.-Մ.-ի վրա և բռունցք բարձրացնելով՝ անուանում է նրան գազիկ, և փողոցային սրիկայի դերը ստանձնած՝ գազանացած պարոնը անպայման կը խփէր, եթէ արդելքներ չը լինէին։

Յայտնելով կատարված եղելութեան մասին հասարակութեան, մի աւելորդ անգամ ևս հրաւան ենք հանում այն պարոնների ֆիզիօնօմիան, որոնք զեկավարում են մեր միջնակարգ կրթական հաստատութիւնները և այլասեռում ամեն ինչ և՛ գիտութիւն, և՛ արդարութիւն, և՛ ճշմարտութիւն...

Մենք պահանջում ենք պ. Խաժակից յետ վերցնել իր խօսքերը և ներողութիւն խնդրել այն աշակերտից, որի վրա ձեռք է բարձրացրել։

Բուր—Ժու

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնից մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը մտադիր է Զատիկից յետոյ ճանապարհ ընկնել դէպի Թիֆլիս։ Վեհափառի առողջութիւնը բաւարար վիճակի մէջ է, թէկ առաջնորդ զգում է ծերութեան թուլութիւն։

—

«Մշակ»-ի հետևեալ համարը լոյս կը տեսնէ հինգշաբթի, ապրիլի 26-ին։

—

Կովկասի Փոխարքան հաճաձայն Երևանի նահանգապետի ներկայացրած փաստաթղթերի, միջնորդութիւն է յայտնել ներքին գործերի մինիստրութեան առաջ հայ-թուրքական ընդհանրամիերից վնասված Ագնակէշ, Կիլլիջա, Արամուս, Թեմալ, Բուզաջիզ գիւղերի բնակիչներին 9901 ռուբլի մատակարարական և սերմանցուի պէտքերի համար։

—

«Баку» լրագրում վեճ է բա. Զաւրեանի հեռագիրը. «Բիթլիսի հիւպատոս Շերկովը հեռագրում է, որ երկրաշարժը քանդել է ամենաչքաւոր հայերի 144 տունը և 5 վանքեր։ Վնասները հասնում են 35,000 լիրայի։ Անհրաժեշտ է անյապաղ և անդիտաձգելի օգնութիւն»։

—

Էջմիածնից մեզ հաղորդում են, որ ապրիլի 15-ին ճեմարանի մանկավարժական ժողովը, հանդուցեալ Ա. Ղուկասեանի կոակի համաձայն, մանկավարժական ժողովի անունով տուած 89 խնդիրներից սահմանեալ նշանակեց ներկայացրած աշխատանքի համաձայն, արտասահման կամ Ռուսաստան գնալու համար Գէորգ Ալթունեանին, Յովհաննէս Կարապետեանին և Ռուբէն Աբրահամեանին։

—

Հայաստեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է, որ 1907 թ-ի ապրիլի 29-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Յովհաննեան դպրոցում կատարվելու է ընկերութեան 25-ամեայ յօբելեանը։ Մուտքը հրաւիրատոմսերով։

—

«Բագու» լրագրում կարդում ենք. «Ապրիլի 14-ին, ցերեկվայ ժամը 12-ի մօտերը, երեք վերստ հեռաւորութեան վրա այն տեղից, ուր կանգնում են կառքերը, չորս անայտ անձինք պարապում էին զենավարժութեամբ, որի մասին յայտնում են պահակներին։ Վերջինները անմիջապես գնում են դէպքի տեղը և շուտով այնտեղից լսում են երկու—բաս երեսոյթին ռուժբի պայթում։ Նրանց տեսնող անյայտները, որի բնակիչները խոշոր էին իր գոտրիկ, պաշտելի, իր փայփայած Շուղիկին և իր խեղճ մօրը խեղաւորութեան հասցրեր։ Ընկեր կարիճների հետ նա ասպատակեց շատ թուրք գիւղեր, աւերեց, հրդեհեց, կործանեց, խողխողեց, մորթատեց, չը խնայելով ոչ սեռ, ոչ հասակ, չը զգալով ոչ մի զութ և կարեկցութիւն, խլանալով ապիրատ կսկիծների, լաց ու կոծի առաջ։ Բայց նրա արիւնարբու ծարաւը չը պակասեց, նրա վրէժխնդիր հոգին յագուրդ չը ստացաւ, որովհետև նրան դեռ չէր այցելում իր վրէժի և կատաղութեան ամբողջ թափը թափել այն թուրք գիւղի վրա, որ թաթախել էր ձեռքը իր անմեղ՝ հրեշտակ քրոջ, Շուղիկի արեան մէջ։

Եւ նա մտնչում էր ահեղ զազանի նման. և նա թափառում էր գաշտից դաշտ ու ասպատակում սարեր, ձորեր։

Անցաւ աշունը, եկաւ ձմեռը. մօտեցաւ Զատիկը և, վերջապէս, հնչեց ուրախութեան ժամը։

Մի օր ընկերները յայտնեցին, որ միւս օրը պէտք է արշաւեն թուրք գիւղերի վրա։

Համփօն կենդանացաւ, Համփօն կազդուրվեց. սպառազինվեց և երկրորդ օրը, լուսաբացին, մի ցուրտ և քամհար օր, նա արշաւում էր խմբի հետ դէպի թուրք գիւղը։

—Տղերք, ասաց ընկերներից մէկը, մենք գիտցանք այսօր ընտրեցինք, այսօր որ նաւակատիք է, Զատիկ ճրագալոյցը, որպէսզի թուրքերը ամենին կասած չը տանեն։

Ճրագալոյց, Զատիկ—մի սարսուռ անցաւ Համփօյի մարմնով. նա նոր յիշեց, որ, ճշմարիտ, վաղը Քրիստոսի Յարութիւնն է, որ այդ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»-ը պէտք է երգեն։ Եւ ահա այդպիսի մի օր նա գնում է թալանելու, աւերելու, սպանելու, կոտորելու։ Մի բօպէ, և նա պատրաստ էր ձիու սանձը ետ դարձնելու, բայց յանկարծ նրա առաջ պատկերացաւ մի տեսարան, որ նորից ամբողջովին յեղաշրջեց նրա մտածումները և նա փշրաւ ոգնու նման։ Մի տարի առաջ այդ օրը, նա վաղ վերադարձաւ նախիրի հետ տուն և մօր պատուէրով ընելով Շուղիկի ձեռքից, գնաց եկեղեցի, ուր «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» լսեց։ Երբ վերադարձաւ, պառաւ մայրը նոյնպէս եկաւ եկեղեցուց, բաժանեց նշխարք և սուրբարան ձգելով՝ ուրախ-ուրախ պատիր, սեր, մածուն, կաթնահունձ և փլաւ դարսեց ու ինքն էլ նստելով՝ օրհնեց Նրանց։ Շուղիկը շուտ շուտ դիմում էր Համփօյին ու ասում։

—Ապու, ապու, եկ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ասենք։

Իսկ այսօր... այդ ուրախ, զուարթ Շուղիկը հանդչում է սառը գերեզմանի մէջ... պառաւ մայրը՝ խելագարված...

Եւ Համփօն ասպանդակներով խփեց ձիու կողքերին ու սլացաւ։

Ցարձակումը թուրք գիւղի վրա սոսկալի եղաւ։ Մի ակնթարթում խոսի դէզերը գիւղի զանազան կողմերում հրկիզվեցին և հրդեհի լոյսը, ծուխի հետ միասին, տարածվեց լայնածաւալ դաշտի վրա։ Վայնասունը պատեց ամբողջ գիւղը. լաց ու շիւանը երկինք բարձրացաւ. հրազէնների պայթիւնը, սրերի շառաչիւնը տարածվեց ծուռ, նեղ փողոցներում, խրթին թներում։ Փախչող փախչողի եղաւ. «Ա՜խ, Ալլահ» աղաղակներով թնդաց օդը և թուրքերը լեղապատառ, յանկարծակիի եկած, այս ու այն կողմն էին վազվզում։

Համփօն, արիւնաթաթախ խէնջալը ձեռքին, մտաւ մի ծուռ և նեղ փողոց, որտեղից խուլ մռնչիւն էր լսվում։

Վաղուց արդէն օրը մթնացել էր և երկնակամարի վրա փայլող աստղերը, տեսութեամբ դիտելով եղեյրասպան կուռի գործած նախճիրը—արիւնաղանգ դիակները, իրանց դալուկ լոյսն էին արձակում դէպի երկինքը նայող այն դէմքերի վրա, որոնք, թէկ մահացած, բայց կարծես բոլոր էին ուղղում դէպի այդ երկինքը, որ այնպէս անվրդով, անխռով աստանաս էր եղել սոսկալի արիւնհեղութեան։

Համատարած լռութիւնը, աչքերը դէպի երկինքը չուած դիակները սարսուռ ազդեցին Համփօյի մէջ, որ մի բօպէ կանգնեց շուարած։ Նա կարծես, քնից նոր արթնած մարդի նման, շլմած նայում էր և առաջին անգամ նրա մէջ զարթնեց այս հարցը. «բայց ինչի համար այս մարդկանց սպանել են։ Այդ շլմումը, սակայն, վայրկենական եղաւ. «հա, յիշեց նա, սրանք սպանեցին Շուղիկին, սրանք աւերեցին մեր գիւղը»։

Եւ կատաղութիւնը նորից արթնացաւ նրա հոգու խորքի մէջ ու բարձրացաւ դէպի գլուխը. նա ձեռքը տարաւ դաշոյնին և սկսեց նոր զոհեր փնտռել. նա առաջ գնաց։ Ցանկարծ, կանգ առաւ. նրա ականջին դիպաւ մանկական մի աղիողորմ կանչ. նա սկսեց առաջ գնալ և ոլքան աւելի էր առաջ ընթանում, այնքան մեկին և պարզ լսում էր. «Նանա, նանա-ջան, վեր կաց։ Մի քիչ լեռում նրա ոտքը դիպաւ մի խոշընդոտի. նա կռացաւ տեսնելու և սարսափից յետ ցատկեց. մի ջահել թուրք կին, արիւնաթաթախ, ընկած էր փոշու մէջ, որ առատօրէն ոռոգվելով նրա արիւնով, ցեխի մեծ շաղախ էր կազմել. մի փոքրիկ աղջիկ ևս, մօր կողքին նստած, թաթախված այդ արիւնազանգ ցեխով, աղիողորմ լացում էր, քաշելով մօր փէշից և կրկնում. «Նանա, նանա-ջան, վեր կաց, գնանք»։ Ի տես Համփօյի, նա կարից լացը և մեծ-մեծ աչքերը չուած, նայից նրան, առանց երկիւղի որևէ նշան արտայայտելու։ Երևի շուրջը տիրող լռութիւնից, ջահել կինը բացից և տեսնելով Համփօյի վայրագ դէմքը ու ձեռքին բռնած խէնջարը, մի սուր ճիչ արձակեց, բայց դրա հետ միասին մի զերբնական ոյժ զործ դնելով, բարձրացաւ, թեքվեց դէպի Համփօն և արտասանեց.

—Ով դու, ով և լինես, չէ՞ որ աղամորդի ես, չէ՞ որ քեզ ևս մայր է ծնել, չէ՞ որ դու ևս աղջիկ ունես կամ քոյր, իմ Բալա Սանամի նման. սպանիր ինձ, բայց աղջկանս, Բալա Սանամին խնայիր, ազատիր նրան։

Ալ արիւնը սկսեց յայտել նրա ճակատի և երեսի վերքերից, որ, երևի յուզմունքից և շարժվելուց նորից բացվել էր. վերջին խօսքերը կինը արտասանեց նուաղած ձայնով և նրա գլուխը նորից յետ թեքվեց ու ընկաւ հողի վրա, բայց աչքերը մնացին չուած Համփօյի վրա, լի աղերսանքով։

Լուսինը անմնացեալ կերպով բարձրացել էր հորիզոնի վրա և իր գաղջ, դալուկ շողերով լուսաւորում էր տխուր տեսարանը։

Բալա Սանամը նորից բարձրացրել էր ադիզորմ կանչը։

Համփօն կանգնած մնացել էր ապշորովին տարված, շլմած. նա ոչ ըմբռնել կարողանում էր և ոչ զգալ. նա կորցրել էր ժամանակի և տեղի հասկացողութիւնը։ Թուրք կնոջ վերջին, հոգեաղբային խօսքերը ամբողջովին ցնցեցին նրան մինչև հոգու խորքը և այդ ցնցումից ընդարմացած, կանգնել էր տեղն ու տեղը սառած։ Մեքենաբար նա կարծես դէպի մի մեծ քար, որ մի քիչ հեռու ցցված էր փողոցում և նստեց։ Շատ թէ քիչ ժամանակ էր նստած, Աստուած գիտէ. նորանոր մտքեր, տեսարաններ պատկերանում էին նրա առաջ։ Նրան թւում էր, որ Շուղիկն է այնտեղ ընկած, նա է լացում, նրա թաթիկներն են մեկնված, երբ նա դեռ փոքր էր. ահա և իր պառաւ մայրը գալիս է եկեղեցուց, նշխարքը ձեռքին մտնելով ասում է. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց». ահա Շուղիկը թաթիկը մեկնում է դէպի կարմիր ձուն. մայրը ստիպում է նրան ասել՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և նա իր մանկական բերանով թոթովում է այդ խօսքերը։

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»—այս անգամ արդէն նա լսից պարզ և մեկին։ Նա նոր յիշեց, որ այսօր Զատկի թաթախումն է։ Նրա ուշը վրա եկաւ և մի նոր փոթորիկ, զօրեղ փոթորիկ ցնցեց նրա ամբողջ հոգին, մի նոր քաղցր զգացմունքով համակվեց նրա էութիւնը։ Ցանկարծ, նա վեր ցատկեց, մօտեցաւ թուրք կնոջ, կռացաւ նրա վրա, ակնջը դրեց սրտին և տեսնելով որ դադարել է բաբախելուց, երկիւղածութեամբ փակեց նրա աչքերը. ապա վերցրեց գետնից փոքրիկ Սանամին, որը այլևս չէր լացում և յոգնածութիւնից քնել էր, հանեց եսիմչին, փաթաթեց նրա մէջ փոքրիկին և սկսեց արագ արագ քայլել։ Մի քիչ յետոյ նա գտաւ ընկերներին և ձի նստելով վերադարձաւ նրանց հետ Տ. գիւղը, տանելով իր հետ միակ աւարը—Բալա Սանամին։

Նա այժմ խաղաղ էր. նրա դէմքը պայծառ էր և հանգիստ. նրա վրէժխնդրութեան ծարաւը յագել էր. նա գտել էր իր Շուղիկին և նրա ուրախութեան չափ ու սահման չը կար։

Նրա հոգու վրա իջել էր խաղաղութիւն...

Շահրիար

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, ապրիլի 9-ին

Որոշ բան ասել ներկայ շարժումների մասին մեր կողմից յանդգնութիւն կը լինի. ստիպված ենք դէպքերը արձանագրել նոյնութեամբ՝ թողնելով եզրակացութիւնը ընթերցողներին։ Անցեալ օր ամիս 7-ին՝ կէսօրին շուկան փակվեց և ժողովուրդը խռնվեց «Անջուման»-ի բակը։ այդ օրը ոչինչ չիմացանք։ Երէկ, կիրակի առաւօտեան զինված թուրք ֆիդայիները սկսեցին ժողովվել դարձեալ «Անջուման»-ի բակը։ Հայերի մեծ բազմութիւն զտնվում էր «Դալայի» եկեղեցում, որովհետև թեմական առաջնորդը սարկաւագութեան ասուիճան էր տալիս երկու տարեցուների. լուրերին թէ թուրքերը խնդրում են հայերիս մի բօպէ, և նա պատրաստ էր ձիու սանձը ետ դարձնելու, բայց յանկարծ նրա առաջ պատկերացաւ մի տեսարան, որ նորից ամբողջովին յեղաշրջեց նրա մտածումները և նա փշրաւ ոգնու նման։ Մի տարի առաջ այդ օրը, նա վաղ վերադարձաւ նախիրի հետ տուն և մօր պատուէրով ընելով Շուղիկի ձեռքից, գնաց եկեղեցի, ուր «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» լսեց։ Երբ վերադարձաւ, պառաւ մայրը նոյնպէս եկաւ եկեղեցուց, բաժանեց նշխարք և սուրբարան ձգելով՝ ուրախ-ուրախ պատիր, սեր, մածուն, կաթնահունձ և փլաւ դարսեց ու ինքն էլ նստելով՝ օրհնեց Նրանց։ Շուղիկը շուտ շուտ դիմում էր Համփօյին ու ասում։

—Ապու, ապու, եկ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ասենք։

Իսկ այսօր... այդ ուրախ, զուարթ Շուղիկը հանդչում է սառը գերեզմանի մէջ... պառաւ մայրը՝ խելագարված...

Եւ Համփօն ասպանդակներով խփեց ձիու կողքերին ու սլացաւ։

Ցարձակումը թուրք գիւղի վրա սոսկալի եղաւ։ Մի ակնթարթում խոսի դէզերը գիւղի զանազան կողմերում հրկիզվեցին և հրդեհի լոյսը, ծուխի հետ միասին, տարածվեց լայնածաւալ դաշտի վրա։ Վայնասունը պատեց ամբողջ գիւղը. լաց ու շիւանը երկինք բարձրացաւ. հրազէնների պայթիւնը, սրերի շառաչիւնը տարածվեց ծուռ, նեղ փողոցներում, խրթին թներում։ Փախչող փախչողի եղաւ. «Ա՜խ, Ալլահ» աղաղակներով թնդաց օդը և թուրքերը լեղապատառ, յանկարծակիի եկած, այս ու այն կողմն էին վազվզում։

Համփօն, արիւնաթաթախ խէնջալը ձեռքին, մտաւ մի ծուռ և նեղ փողոց, որտեղից խուլ մռնչիւն էր լսվում։

Մի քանի քայլ հեռաւորութեան վրա մարդերից, ատիճանաբար նահանջելով դէպի քաղաք, պահակները հետևում են նրանց, իրանց հերթին կրակելով հրացաններից։ Վազելով մինչև Բալախանի խճուղին, անյայտ մարդկանցից երեքը թողնվում են Անդրկովկասի երկաթուղիների վագոնների ետևը, իսկ չորրորդը շարունակում է վազել խճուղով. հետապնդելով ոստիկանութիւնից՝ ուղղվելով Սօլղատակի բաղարի կողմը, վիրաւորում է քաղաքապահի ոտը։ Այդտեղ նրան հանդիպում են կօզակները. նա սկսում է կրակել նրանց վրա. բայց և այնպէս նրան ձերբակալում են և դիմադրութեան հանդիպելով ծեծում են։ Ուրիշ նրանից «կարաբէլում» սխալեմի ատիճանակը, նրան ուղարկում են հիւանդանոց, ուր նա շուտով մեռնում է։ Նրա ժօտ զտնված անցագրում գրված է եղել Գօրու գաւառի Կվմազալի գիւղի ընակիչ Գէօրգի Բարաշվիլի»։

—

Բագում, ապրիլի 14-ին, գիշերվայ ժամը 12-ին մի քանի բաղաքապահներ անցնելիս են եղել Պարսկական փողոցով. փողոցի անկիւններից մէկում նրանք նկատում են մի քանի կասկածաւոր անձնաւորութիւններ և կամենում են ձերբակալել նրանց, բայց նրանք ատրճանակներից կրակ են պարզում. քաղաքապահները իրանց հերթին կրակում են, սակայն անհետանում։

—

Օդեսայից հեռագրում են «Тифлисъ» լրագրին, որ պրոֆէսորներին աջողվել է հանել գնդակը Թիֆլիսի նախկին արքունական թատրոնի ըէժիսեօր Ի. Կարգարէտելու մարմնից։

—

«Голосъ Кавказа» լրագիրը տեղեկութիւն է ստացել, որ ռուսաց սիլոզը բացել է Բագուի առաջնորդութիւնը։ Բարձրագոյն հրամանով յիշեալ պաշտօնի համար նշանակված է Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի բեկտ. Գրիգորի վարդապետը, որը մօտ օրերս մեկնելու է Պետերբուրգ եպիսկոպոս ձեռնադրվելու համար։

—

Յիշեցնում ենք ընթերցողներին, որ ապրիլի 24-ին Կովկասի սովեալների օգտին «Բրուժօկի» ամառային շինութեան մէջ կայանալու է զբօսանք, վիճակախաղ-ալլեգրիով։ Զբօսանք սարքող տ.տ. Դուբսկն և Ֆօն.-Դեր-Գրեբենը բոլոր միջոցները ձեռք են առել, որպէսզի զբօսանքը լինի ճոխ կազմված։

—

Գիւղատնտես Սահակեանը, որին յանձնարարված էր զեկավարել Թիֆլիսի նահանգի դաշտամշները ոչնչացնելու գործը, այժմ ուղարկված է Գանձակի նահանգը մորեխի դէմ կռուելու աշխատանքները կազմակերպելու համար։

—

Մայիսի 2-ին նշանակված է Գանձակի փոխգնում գտնվող Վարդանանի տպարանի աճուրդով վաճառելու։ Վաճառելուց ստացված գումարով պէտք է բաւարարութիւն տրվի տպարանի բանւորներին։

—

Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեան համաձայն Գէորգ Ղազարեանը, իբրև պետական կարգ ու կանոնի և հասարակական հանգստութեան համար վերին աստիճանի վնասակար անձնաւորութիւն (կասկածվում է սպառնական նամակներով փող կողմելու մէջ և պատկանում է հակակառավարական «Դաշնակցութիւն» կազմակերպութեանը) աքսորվում է ոստիկանութեան հսկողութեան տակ Վեռատկի նահանգը։

—

Արշակ Մեհրաբեանը միջնորդութիւն է յայտնել Թիֆլիսի նահանգապետի առաջ, խնդրելով թոյլատրել իրան հրատարակել Թիֆլիսում հայերէն ամենօրեայ լրագիր «Խաբիսխ» անունով։

—

Թիֆլիս է եկել դերասանուհի Լ. Բ. Եաւօրսկայանը, որը Զատկի շաբաթվայ երկուշաբթի օրվանից կէսկի ներկայացումներ տալ Արտիստական ընկերութեան թատրոնում։

—

«Тифлисъ» լրագրին Օդեսայից հեռագրում են, ապրիլի 18-ին օպերացիա են արել Թիֆլիսի Արքունական թատրոնի նախկին ըէժիսօր Ի. Կարգարէտելին, գնդակը հանելու նպատակով։

—

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրը թոյլատրել է գումարել ձիատուրիի մարդանէց արդիւնաբերողների IX-րդ համագումարը մայիս ամսին։

—

Բագուում «Արամազդ» ընկերութեան բանւորները գործադուլ են արել. ֆիրման պատրաստ է բոլոր պահանջներին բաւարարութիւն տալու, սակայն վերացնել առանձին պատուէրով արվող աշխատանքները՝ ոչ մի կերպ չէ համաձայնում։

—

«Рѣчь» լրագիրը տեղեկացիչ է, որ «Утро» լրագրի խմբագիր յայտնի միլիոնատէր-գործարանատէր է բանկիր Բիլբուշկին Մոսկվայից աքսորելու կարգադրութիւնը փոխված է։

—

Լոնդոնի «Financial News» լրագրի բերելեան թղթակիցը հեռագրում է յիշեալ թերթին. «Այս բօպէիս իմացայ մի շատ բարձրատիճան անձից, որ եռանդուն բանակցութիւններ են տեղի ունենում 500 միլիոն ռուսական փոխառութիւն կատարելու համար։ Այդ բանակցութիւններին մասնակցում են գերմանական և ֆրանսական բանկիրները։ Փոխառութիւնը լինելու է Բերլինում։ Սակայն փոխառութիւնը կը կատարվի ոչ շուտ, ի նկատի առնելով Ռուսաստանի ներքին գործերի անորոշութիւնը»։

—

Պարիզից «Рѣчь» լրագրին հեռագրում են, որ բրօսային գործերին լաւատեղեակ մամուլը արտատպել է «Indèpendance Belge» լրագրից այն յօդուածը, ուր ասված է. որ անհրաժեշտ է ռուսական նոր փոխառութիւն բաց թողնել մայիսին։ Փոխառութեան միակ արդելքը լրագիրը Դումայի արձակման մէջն է տեսնում։ Գօլովինին Ցարսկոյէ Սելօյում լաւ ընդունելը զոհացուցիչ տպաւորութիւն է թողել ամենքի վրա։ Բօրսայում ռուսաց արժեթղթերը նորից բարձրացան։

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ, «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, հրեկոյեանները տեղի են ունենում ընդհանուր միջեսչական խորհրդակցութիւններ Պետական Դումայի համար մի զեկուցում պատրաստելու՝ արտաքին փոխառութիւն կնքելու անհրաժեշտութեան մասին։

—

Պետական Դումայի անդամ Գուրիչկեվիչը մօտ օրերս կարդալու է «Պետական Դումայի մասին» մի դասախօսութիւն զինուորական պաշտօնների մանկավարժական կուրսերում։ Այդ կուրսերում ռուս ժողովրդի միութեան անդամները օֆիցերներին ծանօթացնում են ժամանակակից քաղաքական հոսանքների հետ։ («Рѣчь»)

—

Պետական գործարաններում ապրիլի 11-ին սաստկվել է ներքին գործերի մինիստր Ստոլիպինի սառոդրութեամբ մի շրջաբերական հրաման, որը կախված է բոլոր արհեստանոցներում, որով յայտնվում է, թէ գործադուլների, միտինգների և այլն, արդէնք ժողովների դէպքում, գործարանը անմիջապէս կը փակվի։ («Трудъ и Право»)

—

Մոսկվայի քաղաքապետը, «Нов. Вр.» լրագրի ասելով, իր մօտ է կանչել «Парусъ» լրագրի խմբագրին և յայտնել նրան՝ թէ որովհետև «Рѣчь» լրագրի նախկին խմբագիր Ս. Գ. Մաժիկօնեանին, որը այժմ «Парусъ»-ի խմբագիրն է, թոյլատրվեց նորից թերթ հրատարակել այն պատճառով միայն, որ նա խոստացաւ փոխել թերթի ուղղութիւնը, բայց և այնպէս թերթը շարունակվում է իր նախկին ուղղութեամբ, ուստի յիշեցնում է, որ եթէ այդ ուղղութիւնը դարձեալ շարունակվելու լինի, «Парусъ» լրագրի և նրա խմբագրի դէմ ամենախիստ միջոցներ ձեռք կառնվեն։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Նոր բայխստագի կանգնում պատահած ամենաաչքի ընկնող դէպքը ապրիլի 11-ին «ազատամիտների միութեան» պարագլուխ Ֆր. Նաումանի սոցիալ-պօլիտիկայի մասին արտասանած ճառն է։ Շատ վաղուց է, որ գերմանական լիբերալիզմի կողմից մի այդպիսի ուժեղ և ազդու ճառ չէ խօսվել բայխստագի կամարների տակ, մի այդպիսի ճառ, որը առանձին զզրդուն հաներ գերմանական կեանքում, ինչպէս Նաումանի վերոյիշեալ ճառը։ Լիբերալ օրգանները, հիացումով են խօսում այդ ճառի մասին, նոյնպէս և շատ զոհ են սոցիալ-դեմոկրատական բաղմաթիւ թերթեր։ Նաումանի ճառի ժամանակ սոցիալ-դեմոկրատները միշտ մէջտեղակալ կոչերով հաւանութիւն են տալիս եղել։ Ինչպէս գրվում է, պատգամաւորներից մինչև մինիստրները առանձին ուշադրութեամբ են լսելիս եղել Նաումանին, որը, կարելի է ասել, արդէն գերմանական լիբերալների կենտրոնական ուժն է դարձել։

Այդ ճառի գլխաւոր բովանդակութիւնը հետևեալն է, որը տալիս ենք համառօտաբար։

Հէնց ճառի սկզբից Նաումանը նկատում է, որ սոցիալական ռեֆօրմները վերին աստիճանի դանդաղ են առաջ գնում, չը նայելով այն հանգամանքին, որ այդ խնդիրները ներկայումս աւելի ուժգնօրէն են արծարծվում և զբաղեցնում հասարակական միտքը, չը նայելով նրան՝ որ թէ անցեալ և թէ ներկայ բայխստագի պատգամաւորների մեծամասնութիւնը կողմնակից է սոցիալական ռեֆօրմներին և նրա իրականացմանը ձայն կը տայ միշտ. ուրեմն այդ խնդրի համար մեծամասնութեան կամք կայ. բայց ինչու չեն առաջադիմում այդ ռեֆօրմները։ Նաումանը սոցիալական ռեֆօրմների յետամնացութեան պատճառը համարում է գերմանական դաշնակցութեան խորհուրդը *) (Bundesrat), որը միշտ մերժում է բայխստագի մեծամասնութեան առաջարկած պլանները և որ Գերմանիայում պարլամենտարիզմը կաղում է. հէնց դրա գլխաւոր փաստերից մէկն էլ այն է, որ բայխստագը մեր բոլոր, և նա պատրաստ էր ձիու սանձը ետ դարձնելու, բայց յանկարծ նրա առաջ պատկերացաւ մի տեսարան, որ նորից ամբողջովին յեղաշրջեց նրա մտածումները և նա փշրաւ ոգնու նման։ Մի տարի առաջ այդ օրը, նա վաղ վերադարձաւ նախիրի հետ տուն և մօր պատուէրով ընելով Շուղիկի ձեռքից, գնաց եկեղեցի, ուր «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» լսեց։ Երբ վերադարձաւ, պառաւ մայրը նոյնպէս եկաւ եկեղեցուց, բաժանեց նշխարք և սուրբարան ձգելով՝ ուրախ-ուրախ պատիր, սեր, մածուն, կաթնահունձ և փլաւ դարսեց ու ինքն էլ նստելով՝ օրհնեց Նրանց։ Շուղիկը շուտ շուտ դիմում էր Համփօյին ու ասում։

—Ապու, ապու, եկ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ասենք։

Իսկ այսօր... այդ ուրախ, զուարթ Շուղիկը հանդչում է սառը գերեզմանի մէջ... պառաւ մայրը՝ խելագարված...

Եւ Համփօն ասպանդակներով խփեց ձիու կողքերին ու սլացաւ։

Ցարձակումը թուրք գիւղի վրա սոսկալի եղաւ։ Մի ակնթարթում խոսի դէզերը գիւղի զանազան կողմերում հրկիզվեցին և հրդեհի լոյսը, ծուխի հետ միասին, տարածվեց լայնածաւալ դաշտի վրա։ Վայնասունը պատեց ամբողջ գիւղը. լաց ու շիւանը երկինք բարձրացաւ. հրազէնների պայթիւնը, սրերի շառաչիւնը տարածվեց ծուռ, նեղ փողոցներում, խրթին թներում։ Փախչող փախչողի եղաւ. «Ա՜խ, Ալլահ» աղաղակներով թնդաց օդը և թուրքերը լեղապատառ, յանկարծակիի եկած, այս ու այն կողմն էին վազվզում։

Համփօն, արիւնաթաթախ խէնջալը ձեռքին, մտաւ մի ծուռ և նեղ փողոց, որտեղից խուլ մռնչիւն էր լսվում։

Վաղուց արդէն օրը մթնացել է

սոցիալական բեֆորմների խնդրում միշտ աղքատի պէս բունդէսրատ (դաշնակց. խորհուրդ) դանը կանգնած է խնդրողի դերում և միշտ էլ անհետանալու Սրանից երևում է, թէ ինչպէս են բաժանված օրէնսդրական իրաւունքները այդ երկու մարմինների մէջ. եթէ տերութիւնը հաւասարացն չէ մի բայսստագի հետ, կարող է նրան արձակել, այն ինչ այդ մինոնոյնը չի կարող բայսստագը գործադրել բունդէսրատի վերաբերմամբ։

Այնուհետև Նաումանը սկսում է դատապարտել տերութիւնն մի քանի յետադիմական արարքները սոցիալական բեֆորմների խնդրում, չը մոռանալով հանդերձ, որ այդ շրջանում, տերութիւնը միանգամայն անգործ չէ եղել, որոշ բեֆորմներ մտցրել է, սակայն Նաումանի կարծիքով այդ մտցվածները սոցիալական խնդրի միջուկը չեն կազմում, որը տերութեան կողմից միշտ արհամարհված է եղել։

Ներկայ տնտեսական կեանքը այն չէ ինչ առաջ. Գերմանիան դարձել է ազդեցիկ մի մեծ ինդուստրիական երկիր, հաղարաւոր բանուորներ կուտակվել են որոշ շրջաններում, այժմեան ամենակարևոր խնդիրն է աշխատանքի սահմանադրման հարցը, որի վերաբերմամբ տերութիւնը ոչինչ չէ հոգացել։ Որ մինչև օրս գրակնօրէն չի լուծվել բանուորների օրաֆիզացիայի ազատութեան խնդիրը, դա մի մեծ յետադիմութիւն է երկրի համար։ Ներկայ հանգամանքներում բանուորների կազմակերպման խնդիրը ամենակարևոր և հիմնական հարցերից մէկն է, որը ի նկատ պէտք է ունենալ սոցիալական բեֆորմների ժամանակ։ Փոքր ինդուստրիայի և արհեստաւոր բանուորների մէջ արդէն օրգանիզացիան տեղի է ունեցել, չը նայելով օրէնքների յարուցած արգելքներին, այն ինչ մեծ ինդուստրիայի շրջանակներում արգելված է բանուորների կազմակերպման գործը, օրինակ, համարեա բոլոր լեռնային գործերում, յանախ տերութեան գործերում, քիմիական ինդուստրիայի մէջ և այլ շատ ուրիշ գործերում։ Ներկայ տնտեսութիւնը այն դրութեանն է հասել, որ անհատը յետ է մղվել իր առանձին շահերով։ Ներկայումս շահերի կռիւը կարող է միայն ունենալ միմիայն օրգանիզացիայի և կոլեկտիվ ճանաչողով, միմիայն այդ ուղիով կարող են զանազան ինտերէսներ ունեցող դասակներ իրանց շահերը յաջողութեամբ պաշտպանել, ուստի և բանուորներին պէտք է լայն իրաւունքներ տալ կազմակերպվելու։ Գուցէ բայսստագի մեծ մասը ուզենայ աշխատանքի կամերա (Arbeitskammer) հաստատել, որը վերին աստիճանի օգտակար բան է, սակայն աշխատանքի կամերա հաստատելը միայն չունի, եթէ նախ գոյութիւն չունի բանուորների կամերաներ։ Այժմ գոյութիւն ունեն կապիտալիստների, վաճառականների կամերաներ, որպէսզի տընտեսական կեանքը նորմալ զարգանայ, անհրաժեշտ է դրանց կողքին բանուորների կամերաների գոյութիւնը։ Իսկ այս բոլորի հիմքը կազմակերպման ազատութիւնն է։ Եթէ բանուորութիւնը արհեստակցօրէն կազմակերպված չէ, նա գոյն, աշխատանքի ոյժ, առանձգականութիւն չունի, նրանից ամեն բան կարելի է շինել, բայց ոչ կարգին մի բան, ուստի և արհեստական միութիւնների կատարեալ ազատութիւն։

Այնուհետև Նաումանը սկսում է և իր ապագայ պլանների մասին խօսել։ օրգանիզացիայի ազատութիւնը հիմք պէտք է լինի, որ կամաց-կամաց, քայլ առ քայլ հասնենք այսպէս ասած, ինդուստրիական պարլամենտարիզմին, այսինքն տնտեսական մի այնպիսի սիստեմի, ուր աշխատանքները և բանուորները ինդուստրիական աշխատանքի կազմակերպմանը մասնակցութիւն ունենային լրանց ընտրեալներով և կամ բանուորական կամերաներով։ Ինդուստրիայի զարգացումը այնտեղ պէտք է հասցնել, որ մեծ ինդուստրիական բանուորները բաւականութիւն և հաճոյք զգային աշխատանքից և նրա հետ իրանց շահերով կապված լինէին։ Ինչպէս ներկայիս մարդիկ հին ժամանակվայ հպատակ լինելուց դարձել են այժմ ազատ քաղաքացիներ, այնպէս և ինդուստրիական հպատակներից (բանուորներից) պէտք է ձգտել առաջացնելու ինդուստրիական քաղաքացիներ։ Մինչև այս հեռու բեֆորմներին հասնելը պէտք է ժամակայ բեֆորմներով սկսել, որի հիմքը նորից կազմում է միութիւնների և կազմակերպման ազատութիւնը։

Կապիտալիստները և տերութիւնը այս պլանին հակառակ կը լինեն առարկելով՝ թէ դրանով վերանում է աւտորիտէտը, դրանով ինդուստրիան կը զրկվի առաջնորդութիւնից, պրոդուկտիվիտէտից, կարգ և դիսցիպլինան կը վերանա։ Նաումանը նկատում է, որ ընդհակառակը բանուորները մասնակցութիւնը արդիական բերութեան մէջ այն բարիքները կառաջացնէ, ինչ որ պարլամենտարիզմից առաջանում է ժողովուրդների համար։ Բոլոր տեղերը լայն դեմոկրատիզմ։

Ուս.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 ապրիլի։ 1907 թուականից, երկրագործութեան վարչութեանը կից հիմնվում են ոչխարհապահութեան և ձկնորսութեան մասնաժողովներ։

ԲԵՐԼԻՆ, 17 ապրիլի, Ռեյխստագ։ Արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւը քննելու ժամանակ ներկայ են բոլոր մինիստրները և ատատս-սեկրէտարը։ Հասարակութիւնը լցրել է սրահները։ Բոլոր հռետորները, պահպանողականների, ազգային-լիբէրալների և ազատամիտների ներկայացուցիչները միաձայն ընդունում են, որ թէև Գերմանիան թույլ չի տայ Հաագայի կոնֆերէնցիայում կրճատել իր սպառազինումը, թէև Գերմանիան ոչ մի պատերազմ չէ ցանկանում, սակայն անգլո-գերմանական ծովային պատերազմը խեղաւորութիւն կը լիներ։

Իշխան Բիւլովը մանրամասն քննում է Հաագայի կոնֆերէնցիայի ծրագիրը և մատնանշում է, որ արդէն գահական ճառից յայտնի է, թէ որ ատաիման բարեկամաբար ընդունեց գերմանական քաղաքականութիւնը Ռուսատանի առաջարկութիւնը։ Գերմանական կառավարութիւնը լիակատար պատրաստականութեամբ կաջակցէ երկրորդ Հաագայի կոնֆերէնցիայի գործնական հետևանքների իրագործման։ Ինչ վերաբերում է սպառազինումը կրճատելու կամ դադարեցնելու խնդրին, կանցլերի կարծիքով, կոնֆերէնցիայում այդ խնդրի քննութիւնը կասկածելի միջոց է հանդիսանում՝ այդ նպատակին հասնելու համար, յամենայն դէպս գերմանական կառավարութիւնը չը դաւաճ մի այնպիսի բանաձև, որը կարողանար վանել իւրաքանչիւր պետութեան-աշխարհագրական, տնտեսական, զինուորական և քաղաքական նկատմամբ բոլոր խոշոր տարբերութիւնները, և համաձայնութեան համար հիմք ծառայել։ Յարմարվելով ռուսական ծրագրին, Գերմանիան բաւականացաւ նրանով, որ վիճաբանութիւնները թողեց այն պետութիւններին, որոնք յոյս ունեն՝ թէ այդ վիճաբանութիւնները կը վերջանան յօգուտ իրանց։ Գերմանական չէ կասկածել, եթէ ոչ ըիսկի, գոնէ կասկածելի հետևանքների հետ կապված վիճաբանութիւններին։ Եւ եթէ ատապվի որևէ գործնական բան, Գերմանիան այն ժամանակ այդ հետևանքները կենթարկէ բարեխիղճ քննութեան և կը տեսնէ—համապատասխան են արդեօք նրանք ազգային շահերին՝ խաղաղութիւնը պահպանելու և Գերմանիայի դրութեան ապահովացուցիչ։ Յենվելով բիւրոկրատական միաբերան կուսակցութիւններին, Գերմանիան կոնֆերէնցիայում իր գործողութիւններով ցոյց կը տայ անկեղծ ձգտում, դէպի խաղաղութիւնը, քաղաքակրթութիւնը, հաւասարաչափութիւնը։

Անցնելով միջազգային դրութեան, կանցլերը ասում է, որ Գերմանիան Պարսկաստանում գործում է առանց որևէ յետին մտքերի նա շահագրգռված է սոսկ տնտեսական տեսակէտից և կը ցանկանար այդ բանում գործողութիւնների ազատութիւն պահպանել։ առանց որևէ աղմուկների։ նա ապասում է, որ գործադրվեն վերջնականապէս անգլո-ռուսական բանակցութիւնները Պարսկաստանի վերաբերութեամբ։

Քաղաքական հաշիւներում, Բիւլովի կարծիքով, Գերմանիան չը պէտք է օգտվի պետութիւնների տարաձայնութիւններից։ Պետութիւնների անտաղանիքմով չը պէտք է օգտվի, ինչպէս յարմար ասէթից, որը ուրիշների համար անյարմար է։

18 ապրիլի

ԲԵՐԼԻՆ, 17 ապրիլի։ Շվէյցարիայի պատգամաւորներ Հաագայի կոնֆերէնցիայի համար նշանակված են Լօնդոնում դեսպան Կարլինը և Բոյել ու Գուբէր պրոֆէսորները։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ։ Դանիայի կողմից Հաագայի կոնֆերէնցիայի պատգամաւոր նշանակված են Վաշինգտոնում դեսպան Բրոունը, փոխ-ծովակալ Շեյլերը և արտաքին գործերի մինիստրութեան քարտուղար Վիդէլը։

ՊԱՐԻԶ, 18 ապրիլի։ Կլէմանսոն պատասխան ծառայողների պատգամաւորութեան յայտնեց, որ կառավարութիւնը արդէն խիստ միջոցների է դիմում այն պատճառով, որ պոստային ծառայողները չեն հնազանդվում կառավարութեան։ Պատգամաւորութիւնը պնդեց իր պահանջի վրա—վերընդունել արձակված պաշտօնեաներին, յայտնելով որ մերժումը թերևս պատճառ դառնայ, որ գործադուլին չը յաջողվեր։ Կլէմանսոն պատասխանեց, որ հեռ առած միջոցները փոխել չի կարելի։

Մայիսի 1-ին քաղաքում ամեն ինչ հանգիստ է. բանուորների խմբակները կանգնած են աշխատանքի բօրսայի մօտ։ Ձերբակալված են 15 հոգի, որոնք չեն կամեցել ցրվել։

ՆԷԱՊՕԼ։ Անգլիական թագաւորը մեկնեց հիւսիսային Իտալիա։

ԼԻՍԱԲՕՆ։ Լուրերին նայած, ծագել է մինիստրական ճգնաժամ,

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի։ Արևմտեան և Հիւսիս-Արևմտեան երկրի արդիւնաբերական կենտրոններից ստացված տեղեկութիւնների համաձայն, նոր տարվի մայիսի մէկը անցել է բոլորովին հանգիստ։ Ծայրահեղ կուսակցութիւնների յայտարարած գործադուլը չաջողվեց։

ՎԻՆՆԱ։ Ամբողջ կայսրութեան մէջ մայիսեան տօնը բոլորովին խաղաղ անցաւ, ոչ մի ընդհարում չեղաւ։

ՊԱՐԻԶ։ Գաւառներից եկած հեռագիրները յայտնում են մի քանի անջատ գործադուլների մասին։

ՊԱՐԻԶ, 19 ապրիլի։ Հանրապետութեան հրապարակում հանրակաքի մէջ նստած մի ինչ որ անհատ հինգ անգամ կրակեց հրապարակում կանգնած զօրքի վրա։ Գնդակներից մէկը անցաւ զինուորներից մէկի գլխի վրայով։ Կրակողը և նրա հետ եղող կինը ձերբակալվեցին։ Ոստիկանութիւնը հաղիւ կարողացաւ ազատել նրանց ամբոխի ձեռքից։ Ձերբակալվածը իրան անուանեց ուսանողուհի, Եակով Լաւ անունով, ծնվել է Բալտայում 1885 թուին։ Լավը հարցաքնվեց քննիչից։ Նա խօսում է ռուսերէն, անգլիերէն, գերմաներէն և ֆրանսերէն։ Նրա բնակարանում խուզարկութիւն կատարվեց։ Քաղաքում տեղի ունեցան շատ խուզարկութիւններ այդ դէպքի առիթով։

20 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինիստրների խորհուրդը թոյլատրեց անմիջապէս ձեռնարկել Սիբիրեան երկրորդ երկաթուղու կառուցման։ Այդ նպատակի համար յատկացված է 4 միլ. բուբլի ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան զումարներից։

ԲԵՐԼԻՆ, Ռեյխստագում Բիւլովը պատասխանելով սոցիալիստ Դաւիդին, ասաց, որ կառավարութիւնը կը դադարէ կռիւ մղել սոցիալիստների դէմ այն ժամանակ, երբ սոցիալիստները կանգնեն խելացիութեան և օրէնք ճանապարհի վրա։

ՊԱՐԻԶ, 19 ապրիլի։ Երէկ, երեկոյեան ժամը վեցում վիրաւորվեց մի ոստիկան։ Ոստիկանապետը աշխատանքի Բօրսայից դուրս գալու ժամանակ անակնկալ ընդառաջվեց ամբոխից, որին ցրեց հանրապետական զօրամասը։ Մինչև կէսօր ձերբակալեցին 180 մարդու։ զէնք կրելու և անիշխանական լրագիրներ բաժանելու համար։ Երեկոյեան Հանրապետութեան հրապարակում բանուորները աշխատեցին ազատել ձերբակալվածներին։ Ոստիկանները կրակեցին։ Ընդամենը այդ օրը ձերբակալվեցին 760 հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 ապրիլի։ Պետական Խորհուրդը իր դնոփակ նիստում ժիաձայն ընդունեց 1907 թ. նորակոչների օրինագիծը։

Երէկ երեկոյեան Վիբորգեան բանտում սկսվեցին անկարգութիւններ, որոնք ապա դադարեցին։ Այսօր առաւօտեան նրանք վերսկսվեցին և ընդունեցին խիստ կերպարանք։ Քաղաքական բանտարկեալները, որոնք զանազան պահանջներ են ներկայացրել, կոտրատեցին պատուհանները, ջարդեցին դռները և անկարգութիւններ արին։ Կանչված զօրախումբը ստիպված եղաւ զէնքի դիմել։ Սպանված է բանտարկեալներից մէկը, միքանիսը վիրաւորված են։ Կանգը վերահաստատված է։ Քննութիւնը կատարում է դատախազը։

Պետական Խորհուրդը մայիսի 4-ին կը քննէ նեքքին գործերի մինիստրի օգնական Գուրկոյին դատարանին յանձնելու գործը։

Պետական Խորհուրդը երեկոյեան ժամը 4 ի նիստում մտքերի կարճ փոխանակութիւնից յետոյ միաձայն ընդունեց Պետական Դումայի օրենագիծը՝ 6 միլիոն յատկացնել պետական գանձարանից վնասված ազգաբնակութեանը բժշկա-մատակարարական ու բարեգործական օգնութիւն հասցնելու համար։

ՆՈՎՈԶԷՐԿԱՍԿ, 19 ապրիլի։ Ապրիլի լոյս 12-ի գիշերը մի քանի զինված չարագործներ, Կովիլիկինո և Վալիսօլո կայարանների միջև, յարձակվելով գրամատար Կոզլովի վրա, սպանեցին նրան և խլեցին 60,000 բուբլի։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵՍՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻԻԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻՍԱՍԱՐԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արլանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱԲԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻ ՍԱՐԳԵՍՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մեզասեռ. հ.։
Ղ. Մ. ԶԻԿՈՎԱՆ—9½—10 ժ. աչքի, ականջի և նեարդային։
Զ. Ի. ԲԱԼԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՍՏՐԻՍԵԱՆ—11—12 ժ. մարթու, վեներական վերաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծագկանաս.։
Ղ. Ի. ԴԳԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԱԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանծագնութեան։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Հինգշաբթի, ապրիլի 16-ին
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՇԵՆՔՈՒՄ
Հայաստանեաց Որբանոցի Ընկերութեան միջոցները աւելացնելու համար
ԿԸ ԿԱՅԱՆԱՅ
ԶԲՕՍԱՆՔ
1. Մանկական խաղեր
2. Պանօրամ հակայական ձուի մէջ պատկերներ երեխայական կեանքից։
3. Օղակի խաղ ընծայով (призъ)։
ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱԼԼԷԳՐԻ
Կարթ, (удочка)
Եւրօպական պարեր։
ԼՕՏՕ—տոմսակները 20 կօպ։
Մուտքը մեծերի համար 25 կօպէկ
» երեխաների համար 15 կօպէկ
Սկիզբն է ժամը 4-ին
(Կ. Չ.) 1—2

Ի գիտութիւն ընդհանուրի
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
հայերէն լեզուով գիրք
„ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ“
հայոց արարածքից ու Տաճկաց Սուլթանի կեանքից (ոտանաւոր.)
ԳԻՆՆ Է ՀԱՆՊԱՐՀԱՆԱՏՍՈՎ 50 ԿՕՊԷԿ
վերագիր վճարով 10 կօպէկ թանգ, գնողներին 10 և աւելի օրինակ, կանվի 25% զիջում. 100 և աւելի—ըստ համաձայնութեան։ Դիմել հեղինակին. Ростовъ н./Д., Вокзальная площ., торговля Дунаянца Араксу Минасянцу.
(Ե. ու. Կ.) 3—3

Ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերութեան հայկական սեկցիան սրանով յայտարարում է, որ հարկաւոր են ուսուցիչներ համալսարանի դասընթացների համար—սէկը հայոց լեզուի և միւսը թուաբանութեան համար։ Վարձատրութիւնը իւրաքանչիւր մի ժամ դասի համար մէկ բուբլի։ Ցանկացողները թող դիմեն մինչև ապրիլի 28-ը հետևեալ հասցէով. Общество сельскаго хозяйства, Армянскаго секціи народн. университетъ։

«Россія» Ապահովագրական Ընկերութիւնը կապում է ապահովագրութիւններ՝ մանկան դէպքերի, ծերութեան, ցմահ եկամուտների, այրիներին կենսաթոշակ տալու, աղջիկների համար օժիտների, երեխաների ստիպենդիայի դրամագլուխների։
Առ 1907 թուի յունվարի 1-ը ապահովագրվել են 83,021 մարդ 174,411,000 բուբլիով։
Ընկերութեան հիմնական և պահեստի դրամագլուխները 61,000,000 բուբլուց անցնում են։
Մանրամասնութիւնների հետ կարելի է ծանօթանալ «Россія» Ապահովագրական Ընկերութեան վարչութեան մէջ, Պետերբուրգ, Մոսկայա, № 37 և Ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքում, Սերգիեվսկայա փողոց, № 4։

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔԵՐ

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաքու.
Արագ 6 ժամ 58 ր. առաւօտ.
Մարդատար 9 » 3 » »
Պօստատար 8 » 34 » »

Թիֆլիսից դէպի Բաթում
Պօստատար 1 ժամ 21 ր. ցերեկվայ
Արագ 11 » 58 » գիշերվայ
Մարդատար 8 » 5 » »

Թիֆլիսից դէպի Բօրժօմ
Մարդատար 9 ժամ 48 ր. առաւօտ.
» 3 » 8 » ցերեկվայ

Թիֆլիսից դէպի Երևան
Մարդ ապրանք. 1 ժամ 43 ր. ցերեկվայ
Պօստատար 1 » 8 » գիշերվայ

ԷԺԱՆԱԳԻՆ
գրադարանների Վարչութիւնը ձեռնարկելով գիւղական գրադարանների համար գրացուցակներ կազմելու գործը, սրանով դիմում է բոլոր հայ հեղինակներին, թարգմանիչներին և հրատարակիչներին, խնդրելով ուղարկել վարչութեան երկուական օրինակ իրանց գրքերից գրախօսելու և լաւագոյնները գրացուցակների մէջ մտցնելու։ Հասցէն՝ Тифлисъ, Вельяминовская ул. № 8. Дешевая библіотека-читальня։
(Չ. Չ.) 3—10

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ
Տուլչէտի ժամացոյց հայելիով և մուզիկայով։ Դուք մեծ բանականութիւն կը պատճառէք ձեզ, ընտանի քին և հիւրերին, ձեռք բերելով ինքնախաղաց տուլչէտի ժամացոյց հայելիով և սիմֆոնիա մուզիկայով, որը նուագում է շատ քաջը և երկար զանազան գեղեցիկ, ուրախ եղանակներ (ըստ ցանկութեան՝ մարշ, վալսեր, պոլկա և ժողովրդական երգեր) յղկված հայելիով, Պարիզի ձևով. բացի դրանից դրամ 5 գրպ. Գ. Ղարաջինանի
Գրքաւոր պահեստատեղին զեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բաքու, Բաթում։
10, 20, 30 34—40

ԶԱՏԿԱԿԱՆ ՆՈՒԷՐ
յանձնարարվում է
Ա. ՖԻԹՎԱՄԵՆԻ
ԱՆԻՒ ԳՈՒՆԱՏԻՊ
ԱԼԲՕՄԸ
ԳԻՆԸ 1 Ր. 20 ԿՕՊԷԿ
Դիմել՝ «Գուտենբերգ» գրավաճառանոցը։
3—3

Թիֆլիսի Ղաւարդիւնաբերական Ընկերութեան
Վարչութիւնը
սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
որը կայանալու է ներկայ 1907 թուի ապրիլի 27-ին, ուրբաթ օրը, երեկոյեան ժամը 6-ին, ընկերութեան գրասենեակում, Սերգիեվսկի փողոց, տուն Ֆրիդմանցի, № 7.
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
1) Անցեալ 1906 թուի հաշուի և հաշուեկշռի քննութիւնն ու վաւերացումը, վարչութեան և վերատեսչի յանձնաժողովի զեկուցումների հետ. նոյնպէս ծախսերի նախահաշուի և ընկերութեան գործունէութեան ծրագրի քննութիւնը 1907 թուի համար։
2) Վարչութեան մի անդամի (§ 9)։ վերատեսչի յանձնաժողովի երեք անդամի և երեք փոխանդամի ընտրութիւնը (§ 21)։ Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անդամ նշանակվում է նոյն տեղը, մայիսի 6-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։
Տպագրված հաշիւը և բաժնետէրերի ցուցակը կարելի է ստանալ ընկերութեան գրասենեակում։
(Կ. ու.) (22, 27) 1—2

Թիֆլիսի վաճառականական դպրոցի վերատեսուչը
յայտարարում է, որ իրանց որդոց նախապատրաստական դասարաններում (ստորին, միջին և բարձր), ինչպէս և առաջին երկրորդ և չորրորդ դասարաններում տեղաւորեցնել ցանկացողների խնդրագրերի ընդունելութիւնը տեղի է ունենում ամեն լի օրերը դպրոցի դիւանատունը ցերեկվայ ժամը 10—1։
Նախապատրաստական դասատուն ստորին բաժանմունքները ընդունվում են առանց քննութեան 7—9 տարեկան երեխաները։ Մնացած դասարանների համար ընդունելութեան քննութիւնները կը կայանան մայիսի 19, 21, 22 և 23-ին։
(Հ. Կ) 2—2

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ գրախանութում վաճառվում են
1. Գօմպէյի վերջին օրերը, Լօրդ Լիտտօնի թարգմ. Ց. Միրզոյեանի գինը 1 ր. 50 կ.
2. Ասպետ, Վ. Փափազեանի 15 կ.
3. Կեանքը ծովերի խորքում, Լունկեվիչի, թարգմ. Սա. Մալխասեանի 30 կ.
4. Տրիլբի, դրամա 4 արար. թարգմ. Լեոն Մելիք-Աղամեանի 25 կ.
5. Եաբ-աստ, վեպ. 1 արար. 2 պատկեր. Յակ. Դաղարեանի 25 կ.
6. Դարվինիզմ, Ս. Բաղդասարի (Դարվինի պատկերով) 50 կ.
7. Ամենի գող, վիպակ. Ֆ. Մ. Դաստայեվսկու, թարգմ. Ն. Զ. 10 կ.
8. Ինքնասպանութիւն և Զեմստվո, Բէլոխովսկու, թարգմ. Կ. Զալալեանի 15 կ.
9. Տնտեսագիտական զրոյցներ, Կարիշեի, թարգմ. Կ. Զալալեանի 40 կ.
10. Къ введенію на Кавказѣ Земскаго Самоуправленія Кн. Г. М. Туманова 20 к.
11. Գերասիմութիւն ժայռերի լեզուի, Ա. Բ. և Գ. մաս. Սա. Պալասանեանի 75 կ.
12. Ընդհանուր պատմ. Հէնդարի, Վենսպրդովի, թարգմ. Խաչիկ 1 ր.
13. Եւրօպա և Հայաստան, Ամիֆսեատրովի, թարգմ. Ա. Մելիք-Թարեանցի 10 կ.
14. Փուչ գաւակ, դրամա 5 գրգ. Գ. Ղարաջինանի 50 կ.
15. Սրբինի աւետարանը, թարգմ. Տ. Զաւէնի 25 կ.
16. Դիցաբանութեան օրինակներ, Լեոնեան, Ա. մաս 20 կ.
17. Բ. մաս » » » » 20 կ.
18. Գ. մաս » » » » 35 կ.
19. Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան, քաղաքական մաս, կազմեց Լ. Բաբայեան 65 կ.
20. Начальная книжка для армян. школъ С. М. 55 к.
21. Կառապան Հենրիշ, գերմ. թարգմ. Լ. Բաբայեան 50 կ.
22. Հող և նրա մշակութիւն, Գ. Ղազարեանի 15 կ.
23. Սերմ և ցանք, Գ. Ղազարեանի 20 կ.
Գումարով գնողներին զիջումով։ Գրախանութը վերագիր վճարով ուղարկում է միայն նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։ Դիմել.—Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну.
1—2

Чашка
Чистаго Голландскаго
КАКАО
БЕНСДОРПЪ.
принятая послѣ ужина вызываетъ освѣжительный сонъ и укрѣпляетъ нервы.
Продается вездѣ.
BENSDORP'S
REINER HOLLÄNDISCHER
CACAO
AMSTERDAM
HOLLAND.
Ներկայացուցիչ՝ Максъ Познеръ, Лодзь. (տպր. 10, 16, 22)

ՆՈՐ ԳԻՒՏ
„ԲՕՐՕ ՆԱՖԹԱԼԱՆ“
Բոլորովին փչացնում է գլխի թիթը, պիրքացնում մազերը, նպաստում է նրա բուսնելուն և տալիս է նրան իսկական տեսք։
Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, որպէս չը պարունակող ոչ մի վնասակար նիւթ։
Վաճառվում է՝ Кавказское Т-во торгов. аптек. товарами. Офицерское Экономическое общество и въ ихъ отдѣленіяхъ. դեղատներում, դեղավաճառների և հոտաւէտների ծախողների մօտ։ (22, 7) 5—25

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
արտասահմանում տպագրուած 96 գոյնով 63×50 սանտ. մեծութեամբ
ՈՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Դեղարուեստական պատկերի 3-րդ էժանագին հրատարակութիւնը
ԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ ՀԱՆՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՇՄԸ
ՈՐՊԷՍ ԶԱՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՊԷՍ ԲՐՕՇԿԱՆ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ
Գինն է՝ ՈՍԿԵՓԱԿ 18 ր. ԱՐԾԱԹԵՓԱ 3 » ՀԱՆՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ
Գինն է՝ ՈՍԿԵՓԱԿ 15 ր. ԱՐԾԱԹԵՓԱ 3 » ՀԱՆՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ
Առանց կանխավճարի չէ ուղարկվում
(Հ.Կ.) Դիմել՝ Гифлисъ, Вельяминовская, № 24, В. Варданяну. 6—10

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ.

Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5. Телефонъ № 852